


Էլեկտրոնային ընթերցարան

3-րդ դասարան



Երևան 2022

Բովանդակություն

<i>Ես, իմ արմատներն ու տոհմաձառը.....</i>	<i>Շունն ու կատուն Հովհաննես Թումանյան</i>
<i>Հետաքրքիր է իմանալ.....</i>	<i>.....44</i>
<i>Մկների ժողովը. Աթաբեկ Խնկոյան.....</i>	<i>Ճանապարհորդ Ջեկոն. Ստեփան Զորյան..</i>
<i>Ազահի վերջը.....</i>	<i>.....48</i>
<i>Խոզն ու ագռավը. Աթաբեկ Խնկոյան.....</i>	<i>Կապույտ լուսակիրը Ջաննի Ռոդարի....</i>
<i>Ագռավն ու աղվեսը. Աթաբեկ Խնկոյան ...</i>	<i>.....53</i>
<i>Հայ ժողովրդական հեքիաթ «Ճնճուկը»..</i>	<i>Հիշողություն . Ղազարոս Աղայան.....</i>
<i>14</i>	<i>.....55</i>
<i>Վագրի վրա մոնչացող տղան. Դոնալդ</i>	<i>Աչքերի գանգատը. Ջ. Ռոդարի.....</i>
<i>Բիսեթ.....</i>	<i>.....57</i>
<i>19</i>	<i>Մեղուն ու մարդը . Ղազարոս Աղայան ...</i>
<i>Աղվեսը. Հ.Թումանյան</i>	<i>.....58</i>
<i>22</i>	<i>Թափանցիկ Ջակոմոն Ջանի Ռոդարի....</i>
<i>Կաքավ (տեղեկատվական տեքստ).....</i>	<i>.....60</i>
<i>25</i>	<i>Արև Ղազարոս Աղայան.....</i>
<i>Կաքավ Մշակույթը՝ Արուսյակ</i>	<i>Ծառերի գանգատը Ջանի Ռոդարի.....</i>
<i>Սահակյանի.....</i>	<i>.....64</i>
<i>26</i>	<i>Միսլ արձագանք Ջանի Ռոդարի.....</i>
<i>Զմեռ Պապիկին նամակ գրելու օր.....</i>	<i>.....66</i>
<i>28</i>	<i>Մեծ գյուտարարը Ջաննի Ռոդարի.....</i>
<i>Չյուն Գեղամ Սարյան.....</i>	<i>.....68</i>
<i>29</i>	<i>Ծույլ-գետը Դ.Սոկոլով</i>
<i>Եղնինի Համո Սահյան</i>	<i>.....70</i>
<i>31</i>	<i>Վայրի կարայներ Հանս Քրիստիան</i>
<i>Հեքիաթ բախտը բերելու մասին</i>	<i>Անդերսեն.....</i>
<i>34</i>	<i>.....72</i>
<i>Անբան Հուրին Հովհաննես Թումանյան..</i>	<i>Մատնաչափիկը /համառոտ/ Հանս Քրիստիան Անդերսեն</i>
<i>36</i>	<i>.....75</i>
<i>Ամենից լավ տունը Հովհաննես</i>	<i>Անձոռնի ճուտիկը (համառոտ)</i>
<i>Թումանյան</i>	<i>Հանս Քրիստիան Անդերսեն</i>
<i>41</i>	<i>.....78</i>
	<i>Չյունն թագուհին (համառոտ) Հանս</i>
	<i>Քրիստիան Անդերսեն</i>
	<i>.....80</i>

Ես, իմ արմատներն ու տոհմաձառը

Յուրաքանչյուր մարդ պետք է ճանաչի ինքն իրեն: Քեզ ճանաչելու ամենալավ ու հետաքրքիր ճանապարհը զրույցն ու ուսումնասիրությունն է: Զրուցի՛ր տատիկ, պապիկիդ, մայրիկիդ, հայրիկիդ հետ, ճշտի՛ր նրանցից քո անվան, ազգանվան ծագումը, հարցրու՝ ովքեր են արյունակցական հարազատներդ, որտեղի՞ց է սերում ձեր տոհմը:

Առաջադրանքներ

1. Ուսումնասիրի՛ր քո արմատները, որտեղից են նրանք սկիզբ առնում: Գրի՛ր քո տոհմի, ազգանվան ծագման մասին:
2. Ուսումնասիրի՛ր ծնողներիդ արմատները՝ ծննդավայրերը:
3. Գրի ա՛ռ ծնողներիդ ծննդավայրի մասին պատմող հետաքրքիր զրույցավանդապատումները:
4. Ստեղծի՛ր քո տոհմաձառը:
5. Բոլոր աշխատանքները տեղադրի՛ր բլոգումդ:

Հետաքրքիր է իմանալ

Տոհմի, ազգի, ընտանիքի մասին հիշողությունները հաճախ արտացոլվում են ծառի տեսքով, ինչը զարմանալի չէ, քանի որ ծառը հանդիսանում է վերարտադրության և զարգացման բնական մոդել: Նույն պատճառով ծառի տեսքով ստեղծվում են առաջացման և զարգացման պատմություններ: Այն ունի արմատներ, զարգանում և ճյուղավորվում է:

Վերարտադրման «ծառակերպ մոդելը» հիմնականում կապված է մարդու և մարդկային հասարակության հետ, ուղղակի կամ անուղղակի հիմնավորվում է նաև համընդհանուր կենսոգ ծառի կերպարով՝

ապահովելով հավերժ ծաղկունք և պտղաբերություն: Չարմանալի չէ, որ հայկական ավանդույթներում տոհմաձառը հաճախ բառացիորեն անվանվում է «կենաց ծառ» և պատկերվում է հավերժության խորհրդանիշով:

Հայերի մեջ տոհմաձառերը լայն կիրառություն սկսեցին ունենալ 19-րդ դարից, երբ բարձրացավ մարդկանց կրթվածության մակարդակը: Դրանք սովորաբար պատկերվում էին հաստաբուն ծառի տեսքով: Ծառի բունը խորհրդանշում է տոհմի հիմնադրին: Որպես տոհմի շարունակականություն՝ ծառի ճյուղերը խորհրդանշում են տոհմի արական սեռի ներկայացուցիչները, որոնց վրա գրվում է նրանց անունները:

Աղբյուրը՝ <http://boon.am/tohmatsarer/>





Մկների ժողովը

Սով էր, սով էր Մկստան
 Կատվի ձեռից լկստան:
 Գզիրն ընկավ դռնեդուռ,
 Էլ չթողեց տուն-կտուր,
 Ջահել, ահել գեղովի,
 Ջոջերին ջոկ տեղովի
 Կանչեց, բերեց ժողովի՝
 Թե ինչ անեն, որ կատվեն
 Մի հնարքով ազատվեն:
 Եկան գյուղի ջոջերը,
 Երկար բարակ պոչերը,
 Մասնակցեցին խորհրդին,
 Մի մուկ խոսեց իր հերթին.
 - Լսե՛ք, մկնե՛ր գեղակից,
 Չունեմ որդի, կողակից,
 Ես մի անտեր ծերուկ եմ,
 Բայց պատվավոր մի մուկ եմ.
 Պակսեց ուժը իմ ոտի,
 Պետք է մեռնեմ անոթի...
 Սովն է չոքել դռանը,
 Ա՛խ, մոռանը, մոռանը,
 Վեր է ընկել մառանը,
 Ինչքան ասես նազ անի,
 Ստից սատկի, տազ անի,

Աթաբեկ Խնկոյան

Մուկ տեսնելիս վազ անի,
 Գլխից բռնի, կախ անի,
 Թաթովը տա, խաղ անի,
 Ուտի, քեֆը չաղ անի,
 Էսպես զուլում ու կրակ,
 Դեռ աչքերն էլ ջուլիստ ճրագ:
 Բայց թե ազնիվ մեր ցեղը
 Կորչելու չէ զուր տեղը,
 Ցավն էլ ունի իր դեղը...
 Ա՛յ, բերել եմ ես մի զանգ,
 Ծափ, ծլնգոց,
 Մեջը զնգոց.
 Կատվի վզից մենք կախ տանք,
 Որ ինչքան էլ օրորա,
 Որ ինչքան էլ շորորա,
 Ստից սատկի, տազ անի,
 Գալն իմանանք զազանի:
 Է՛, զանգը ո՞վ կախ անի.

- Ալո, դո՛ւ:
- Ալո՞ն տանի:
- Բալո, դո՛ւ:
- Բալո՞ն կախե:
- Չալո, դո՛ւ:

- Չալոն կա'ղ է:
 - Մստո, դո'ւ:
 - Մստոն կարճ է:
 - Փոստո, դո'ւ:
 - Էդ էլ խի՞ դճ է:
 - Համբո, դո'ւ:
 - Ես տկար եմ
 - Չամբո, դո'ւ:
 - Ասենք տարա,
- Բա որ կատուն գա ինձ վրա՞:
- Բստոն, Խտոն թող մեկից

- Բոնեն կատվի քամակից:
- Ի՞նչ է խոսում չոր գանգը,
 - Լավ է դու տար էդ գանգը,
 - Էլ ի՞նչ Բտո, ի՞նչ Ֆստան,-
 - Ճստաց Բստոն ճստճստան:
 - Լո՞ի, հանդուզն,
 - Կոտորվե'ք դուք,
 - Վախկոտներիդ ես թաղեմ,
 - Ճա՞ն ասեմ, թե՞՞ գանգ կախեմ,-
 - Գոչեց ջոջը,
 - Քաշեց պոչը:

Առաջադրանքներ

1. Դուրս գրիր այն հատվածը, որտեղ խոսվում է օրորալուց, շորորալուց, տազ անելուց:

2. Տրված վանկերի գույգերը գտի՛ր և ստացի՛ր բառեր:

գա, սա, օ, պա, ար, կա, կեն, ա, մո, աղ,

դա, զար, ջիկ, սակ, չու, պիկ, պա, յու, խիր, ձան, նի, լոր, կի,

3. Շարունակի՛ր ըստ օրինակի՝

Տուն-տներ

չուն, մարդ, աղջիկ, քար, դուռ, մատ, երեխա, կենդանի, գնդակ

4. Հարցերին պատասխանելով՝ կազմի՛ր նախադասություններ:

Ինչպիսի՞	Ի՞նչը	Ի՞նչ է անում
Ո՞վ	Ի՞նչ է անում	Որտե՞ղ
Ինչերը՞	Ի՞նչ են անում	Որտե՞ղ
Ովքե՞ր	Ի՞նչ են անում	Որտե՞ղ

5. Փորձի՛ր հակիրճ պատմել առակը:

6. Կատվին նամակ գրի՛ր և զգուշացրու՛, թե մկներն ի՞նչ են որոշել անել:



Ագահի վերջը

Կար-չկար մի թագավոր: Նա երեք աղջիկ ուներ: Մեծ աղջիկները շատ գեղեցիկ էին, հաջողակ և սիրված հոր կողմից: Իսկ փոքրը՝ չէր փայլում գեղեցկությամբ և գործերում էլ նրա բախտը չէր բերում: Հայրը նրան ուշադրություն չէր դարձնում: Աղջիկն իրեն շատ միայնակ էր զգում: Եվ ահա մի անգամ աղջկան ուղարկեցին ջուր բերելու: Գնաց — գնաց և տեսավ մի գետակ: Որոշեց մի փոքր ջուր խմել: Հենց խմեց, իսկույն դարձավ գեղացիկ աղջիկ: Նա արագ գնաց տուն և ասաց.

-Տեսեք թե ես ի՞նչ գեղեցիկ եմ:

Քույերը հարցրեցին թե այդ ինչպե՞ս եղավ: Եվ փոքրիկ քույրը ամեն բան պատմեց այնպես, ինչպես եղել էր: Նախանձ ու ագահ քույրերը արագ վազեցին դեպի գետը, երբ հասան ագահի պես սկսեցին խմել այդ ջիրցր, որ ավելի գեղեցկանան: Խմելուց հետո իրենցից գոհ վերադարձան տուն և երբ մտան ներս, հայրը շատ զարմացավ, որովհետև իր գեղեցկուհի աղջիկները վերածվել էին սգեղ վիուկների: Ահա դա էլ եղավ նրանց ագահության համար մեծ պատիժի:

Առաջադրանքներ

1.Տեքստից դուրս գրի՛ր փոքր աղջկա մասին պատմող հատվածը:

2.Գտրի՛ր տրված բառերի նույն իմաստն ունեցող բառերը և տեղադրի՛ր համապատասխան տեղում՝ զվարթ, արփի, ներկել, խոշոր, ողջույն:

արև _____

բարև _____

մեծ _____

ուրախ _____

թաց _____

զունավորել _____

3. Գտրի՛ր տրված բառերի հակառակ իմաստն ունեցող բառերը և տեղադրի՛ր համապատասխան տեղում՝ անխելք, զով, խավար, մանուկ, սև, անգույն:

լույս _____

զունավոր _____

շոգ _____

ծեր _____

սպիտակ _____

խելացի _____

4. Գրի՛ր անուններ, որոնք սկսվում են Օ կամ Է տառով:

**5. Հետևյալ բառերով նախադասություններ հորինի՛ր:
օգտակար, արդուկ, ձվածեղ, ծիածան**

6. Շարունակի՛ր նախադասությունը:

Անտառում կար մի մեծ ծառ, որն ուներ.....:

Ոգնին որոշեց գլորվել, որովհետև.....:

Իմ անունը է, որովհետև.....:



ԽՈՋՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

Մի դարավոր կաղնու տակ
Խոզը ազահ ու անհագ,
Այնքան կաղին զխտվեց,
Որ ցած ընկավ ու փռվեց:
Զարթնեց քնից ու տակից
Ծառը փորեց արմատից:
Ի՞նչ ես անում, այ անգետ, —
Ագռավն ասաց վերևից: —
Խա՞ղ ես անում ծառի հետ,
Կչորանա արևից:
Չորանում է՝ չորանա,

Առաջադրանքներ

1. Առակից դուրս գրի՛ր այն քառատողը, որտեղ կա՝ չորանա, գորանա, ունենամ, գիրանամ բառերը:

Աթաբեկ Խնկոյան

Ինձ ի՞նչ օգուտ՝ գորանա,
Միայն կաղին ունենամ,
Ուտեմ, պառկեմ, գիրանամ:
Այ ապերախտ կենդանի,
Ով քեզ նման վիզ ունի՝
Իր կույր աչքով չի տեսնի,
Որ կաղինը հյութալի
Լոկ այս ծառն է ձեզ տալի, —
Ագռավն ասավ խոզուկին,
Էն կախ գլուխ կուզիկին:

2.Գրի՛ր բառեր, որոնք սկսվում են օ և ո տառերով:

3.Նախադասությունը լրացրո՛ւ:

Իմ գնդակը գլորվում է, որովհետև

Ընկերս եկավ մեր տուն, որ

Թռչունները չվում են տաք երկրներ, որովհետև.....

Հետաքրքիր է իմանալ:

Ինչպես է երկրի վրա առաջացել ջուրը

Գիտնականների մի մեծ խումբ կարծում է, որ Երկիր մոլորակը միլիոնավոր տարիներ եղել է առանց ջրի: Հետո, դարձյալ միլիոնավոր տարիների ընթացքում մեր մոլորակը տիեզերքից ենթարկվել է բազմաթիվ <<ոմբակոծությունների>>, այսինքն, հազարավոր երկնաքարեր են ընկել մեր մոլորակ: Այդ երկնաքարերը պատված են եղել սառույցով, և, ընկնելով Երկրի վրա, սառույցը հալվել է ու դարձել ջուր: Այս տեսակետն, իհարկե, վերջնական ապացուցված չէ: Գիտնականներն անգամ փորձում են հասնել տիեզերք, վերցնել երկնաքարերի սառույցի նմուշն ու դրա բաղադրությունը համեմատել մեր ջրի հետ: Միայն այդ համեմատությունը կարող է վերջնական պատասխան տալ այդ հարցին:



Ագռավն ու աղվեսը

Բախտի բերմամբ,
Թե պատահմամբ,
Մի մեծ ագռավ
Մի գունդ պանիր
Դաշտում գտավ,
Կտուցն առավ,
Ծառին թռավ:
Օ՛, ի՛նչ պանիր, դեղին ոսկի...
Բայց դեռ չառած համը իսկի,
Աղվեսն անցավ ծառի մոտով,
Գերվեց, էրվեց պանրի հոտով:
Վազեց գնաց բերնի ջուրը,
Եվ թուլացան կուռն ու ճուռը,
Էն ժամանակ իրա ձևին,

Աթաբեկ Խնկոյան

Ծառի տակից, աչքն ագռավին,
Հեզիկ, նազիկ, Փափկամազիկ,
Բացեց լեզուն անո՛ւշ, մեղո՛ւշ:
Թափե՛ց, չափե՛ց շաքար ու նուշ:
Ես քո գերին
Քո էդ սևիկ
Վառ աչքերին,
Նուրբ ծալքերով
Զույգ թևերին:
Մի դու մտիկ,
Էդպես քթիկ,
Էդպես ճտիկ,
Մախմուր ազին,
Խաս ու դումաշ,

Ատլասն հագին:
Գիտե՛մ, անշուշտ, իմ քուրիկի
Ձայնն էլ կըլի հրեշտակի:
Երգի, քուրիկ, մի ամաչի,
Իմ ուզածը մի մեծ բան չի:
Թե որ չքնաղ էդ տեսքիդ հետ
Երգելում էլ եղար վարպետ,
Օ՛, կդառնաս, իմ մաքրուհի,

Թռչունների մայր թագուհի:
Ագռավ ազին իրեն տված
Գովեստներից շշմած, ուռած՝
Ագռավային
Բկովը մին
Որ չկոռա՛ց,
Պանիրն ընկավ ծառիցը ցած,
Շողոքորթը ըոխեց, գնաց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դո՛ւրս գրիր քեզ անձանոթ բառերն ու բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

2. Նշի՛ր առակի ամենատխուր հատվածը:

3. Բնութագրի՛ր առակի գլխավոր հերոսներին:

4. Փորձի՛ր արդարացնել աղվեսին:

5. Առակը համառոտ պատմի՛ր և նկարի՛ր:

Հայ ժողովրդական հեքիաթ «Ճնճղուկը»



I

Լինում է, չի լինում, որ չի լինում, ո՞նց է լինում: Ուրեմն լինում է մի ծիս: Սա մի ծառի վրա բույն է շինում, ձագ է հանում ու ապրում է իր համար: Ամեն օր կեր է ճարում, հա՛մ ինքն է ուտում, հա՛մ էլ ճտերին բաժին հանում:

Օրերից մի օր էլ էս ծիսը տանը չի լինում, մեծ ճուտը փոքրին ասում է. «Արի քեզ թռչել սովորեցնեմ»: Բնից դուր է գալիս, մի երկու քայլ է անում, պուճուրն էլ հետևից մի քիչ առաջ է գնում: Մեծն անցնում է մյուս ճյուղին: Էս պուճուրն էլ կրկնկակոխ գնում է: Բայց արի ու տես, որ էս պուճուրի խելքին փչում է իր գլխու բաներ անել. «Ես էստեղ մնացողը չեմ, թռչեմ, գնամ աշխարհ ման գամ»: Ճուտ դու ճուտ, ասելն ու թռչելը մեկ է լինում: Բայց ո՞ւր, իսկի թռչել չգիտի: Ընկնում է ուղիղ ծառի տակի ցեխի մեջ: Մի կերպ ցեխից դուրս է գալիս: Կողքին մի տերև է լինում: Էս ծիսը թե՛

-Տերև՛, ա՛յ տերև, ի՞նչ կլինի, ինձ սրբես: Էս տերևը թե՛

— Է՛է՛հ, չէ մի չէ ...

Ես ծառի գլխի որդերը շարժվում են.

-Լավ, տես ես քո գլխին ի՞նչ օյին խաղամ,- ասում է ու թռչում գնում:

Կողքի արտում մի չալպուտուրիկ այծ է լինում:

Էս այծին թե՛

-Ա՛յժ ախպերր, ի՞նչ կլինի՝ գաս էս տերևին ուտես: Ինձ չի մաքրում, որ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Էս այծը թե՛

-Մըկըկը, ես էս կանաչ արտը թողնեմ, գամ, քո չոր տերևն ուտեմ, էդ իմ գործը չի, թող գնա:

II

Էս ծտի ճուտը թռչում գնում է, գնում է տեսնում սարում մի հովիվ,
մոտենում է թե՛

-Ա՛յ հովիվ, եկ գնանք, էն արտի այծին կեր, որ տերևին չի ուտում, տերևն էլ ինձ չի մաքրում՝ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Հովիվը թե՛

-Պահ, ա՛յ ծտի ճուտ, ես իմ դմակավոր գառները թողնեմ, գամ քո պուճուր ա՞յծը ուտեմ:

Էս ճուտն էլ թե՛

-Դե լա՛վ, կտեսնես:

Ու թոչում գնում է:

Գնում է, գնում, մի գյուղում մի հարսանիքի է հանդիպում: Հարսանիք, ի՛նչ հարսանիք, էլ դու սուս: Զուռնաչին ու դիպչին հո չեն ածում, հո չեն ածում, սարերը դմբդմբում են: Մի կերպ գնում է դիպչու ականջին ասում.

-Ա՛յ դիպչի, ի՞նչ կլինի գաս, էն սարում մի հովիվ կա, դիպչո՞ւ ձայնով գժվացնես նրան, որ այծին չի ուտում, այծն էլ տերևին չի ուտում, տերևն էլ ինձ չի մաքրում՝ թոչեմ գնամ, բնումս կենամ:

Էս մարդը թե՛

-Ա՛յ, ծիտ. էս իմ հարսանիքը թողնողը չեմ, սարի հովվի հետ էլ գլուխ դնողը չեմ:

Ծիտը ճարը կտրած թոչում գնում է: Գնում է, տան պատի տակ մի մուկ է տեսնում.

-Մո՛ւկ, ա՛յ մուկ, գնանք դիպչու դիպչո՞ւ ծակի, որ չի գնում հովվին գժվացնի, հովիվն էլ այծին չի ուտում, այծն էլ տերևին չի ուտում, տերևն էլ ինձ չի մաքրում՝ թոչեմ գնամ, բնումս կենամ:

Էս մուկն էլ ոչ մեկ, ոչ երկուս, ետ է դառնում, թե՛

-Ա՛յ, ծտի ճուտ, կորի գնա, է՛, էս էս գաթեն ու աղանձը չեմ թողնի գամ քո չոր դիպչո՞ւ ծակեմ:

III

Ծտի ճուտը թոչում է գնում: Մի տուն է գնում, տեսնում աչքի մեկը կույր մի պառավ թախտին նստած, մի գավազան էլ կողքին: Կույր աչքի կողմը կաթով աման կա դրած, մի կատու էլ վառարանի մոտ քնած է: Դու մի

ասի, էս կատուն ամեն անգամ պառավից թաքուն կաթն ուտում է, բեղերը լիզում, մի կողմ քաշվում: Էս ծիտը կատվի ականջի տակ փսփսում է.

-Փիսի՛կ, փիսի՛կ:

-Մյառ՛ւ, ի՞նչ...

-Արի գնանք էն մկանը կեր, որ չի գալիս դեռ ծակի, դեռ չին չի գալիս հովվին գժվացնի, հովիվն էլ այծին չի ուտում, այծն էլ տերևին չի ուտում, տերևն էլ ինձ չի մաքրում՝ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Էս կատուն թե՛

-Ա՛յ ծիտ, ծտի ճուտ, էս էս կաթ ու մածունը թողնողը չեմ, գամ քո հարամ մուկն ուտեմ:

-Դե լա՛վ,- ասում է ծիտն ու գնում է պառավին գանգատվում,- նանի՛, ա՛յ նանի, էս կատվին մի լավ դնգստի, քո կաթն ու մածունը նա է ուտում, գո՛ղ է, գո՛ղ:

Պառավը գավազանը տանում է բերում տուր թե կտաս կատվին: Կատուն տեղից պոկվում է, վազ տալիս՝ մկանն ուտի, մուկն էլ վազում է՝ դեռ ծակի, դեռ չին վազում է՝ հովվին գժվացնի, հովիվը վազում է՝ այծին ուտի, այծը վազում է՝ տերևին ուտի, տերևն էլ դողդողալով ծտին սրբում է, մի լավ մաքրում:

Ծիտն ուրախացած թռչում է իր բույնը, կանգնում ճյուղին ու երգում.

Ծիտն էմ, ծիտն էմ,

Ծտի ճուտն էմ:

Մոր բերած էմ:

Հոր պահած էմ:

Անուշ քրոջ թոցրած էմ,

Ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կարո՞ղ ես ճիշտ դասավորել բառերը:

մի տանը օր էլ էս չի լինում, մեծ Օրերից ծիտը ճուտը փոքրին ասում է.
«Արի թոչել քեզ սովորեցնեմ»:

2. Կարո՞ղ ես հիշել նմանատիպ հեքիաթներ, գրի՛ր դրանց վերնագրերը:

3. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Ծտի ճուտը թ...չում է գնում: Մի տուն է գնում, տեսնում ա....քի մեկը կույր
մի պառավ թա...տին նստած, մի գավազան էլ կո....քին: Կույր աչ...ի
կողմը կաթով աման կա դրած, մի կատու էլ վառարանի մոտ քնած է: Դու
մի ասի, էս կատուն ամեն ան....ամ պառավից թաքուն կաթն ուտում է,
բեղերը լիզում, մի կողմ քաշվում:



Վագրի վրա մոնչացող տղան

Դոնալդ Բիսեթ

Հնդկաստանում Սադի անունով մի տղա կար: Նա սիրում էր վագրերի վրա մոնչալ:

— Զգո՛ւյշ, -ասում էր մայրը,- վագրերը չեն սիրում, որ իրենց վրա մոնչում են:

Բայց ո՞ւմ ես ասում, մի ականջով մտնում էր, մյուսով դուրս գալիս: Մի օր էլ, երբ մայրը խանութ էր գնացել, Սադին դուրս եկավ ու գնաց վագր գտնելու, որ վրան մոնչա:

Երկար չփնտրեց: Վագրն էլ ծառի ետևում Սադիին էր սպասում. հենց Սադին մոտեցավ, նա դուրս թռավ ու մոնչաց.

— Ռոռոռոռո՛ր ո...

Սադին էլ մոնչաց.

— Ռոռոռոռո՛ր ո...

«Սա ինձ ինչի՞ տեղ է դրել, — նեղացած մտածեց Վագրը, — կատվի՞, նապաստակի՞, սկյուռի՞: Հը՞, ոնց որ «սկյուռ» են ասում, հա՞»:

Մյուս օրն էլ վագրը Սադիին տեսավ, թե չէ, ծառի ետևից դուրս թռավ և առաջվանից բարձր մոնչաց.

— Ռոռոռոռո՛ր ո...

— Հա՛, վա՛գր. Ողջո՛ւյն, -ասաց Սադին ու թփթփացրեց վագրի ուսին: Վագրը չէր սիրում, որ իր ուսին թփթփացնում էին: Այդ պատճառով էլ բարկացած հեռացավ: Նա ճանկերն էր սրում, պոչը գետնին խփում, փորձում էր ավելի զարհուրելի մոնչալ:

— Ախր ես Վագր եմ, — կրկնում էր նա, — Վա՛գր, Վագրո՞ւր... հետո գնաց գետից ջուր խմելու:

Խմե՛ց, կշտացա՛վ ու նայեց ջրին: Գետի միջից մի գեղեցիկ վագր էր նայում՝ դեղի՛ն, սև շերտերո՛վ, երկար պոչո՛վ: Նա նորից մոնչաց ու այնքան բարձր, որ ինքն էլ սարսափած փախավ: Վագե՛ց, վագե՛ց ու հոգնեց:

«Ումի՞ց եմ փախչում, — մտածեց նա, — չե՞՞ որ մոնչացողը ես էի: Չե՛, այդ տղայի պատճառով իսկիս լրիվ թոցրել եմ: Չեմ հասկանում՝ ինչո՞ւ է նա վագրերի վրա մոնչում»:

Մյուս օրը, երբ Սադին անցնում էր իր կողքով, վագրը կանգնեցրեց նրան. — Ինչո՞ւ ես մոնչում վագրերի վրա:

— Ախր նրանցից վախենում եմ, է՛, — ասաց Սադին, — իսկ երբ ես եմ նրանց վրա մոնչում, կարծես հակառակն է ստացվում:

— Հա՞, — զարմացավ վագրը:

— Վագրերը աշխարհի ամենասարսափելի կենդանիներն են, — շարունակեց Սադին, — միայն քաջերը չեն վախենում նրանց վրա մոնչալ: Վագրին դա շատ դուր եկավ:

— Կոկորդիլոսից էլ են սարսափելի՞, — հարցրեց նա:

— Հա՛, բա ի՞նչ, — պատասխանեց Սադին:

— Առյուծների՞ց էլ:

— Ըհը՛:

Վագրը հաճույքից մոլտաց: Տղան նրան արդեն դուր էր գալիս:

— Բայց դու շատ լավ տղա ես, հա՛, — ասաց վագրը ու լիզեց Սադինին:

Այդ օրվանից նրանք հաճախ էին միասին թափառում ու մոնչում իրար վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բառարանի օգնությամբ բացատրի՛ր անհասկանալի բառերը:

2.Քո կարծիքով ի՞նչ է նշանակում.

ա. մի ականջով մտնում է, մյուսով դուրս գալիս

բ. սա ինձ ինչի՞ տեղ է դրել

գ. խելքը թոցնել

3.Ինչո՞ւ էր Սադին մոնչում վագրերի վրա:

4.Նշի՛ր այն հատվածը, որը պատմում է վագրի կատաղության մասին:

5.Քո կարծիքով՝ ամեն անգամ վագրին հանդիպելին Սադին ի՞նչ է մտածում:

6.Հորինի՛ր պատում, մուտքագրի՛ր պատումդ, նկարի՛ր ջրաներկով կամ գուաշով, պատումիդ հետ միասին տեղադրի՛ր բլոգումդ:

Ժպտացող վագրը



Աղվեսը

Աղվեսն եկավ բարձր սարից,
Հարցնունք արավ լիքը թառից.
Մեծ խորոզ է հարկավոր ինձ.
Քաղցած աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն հագել քուրքը դեղին,
Պտուտ կուգա շուրջը գեղին.
Ջուր կտրվեց տատիս լեղին.
Դեղին աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն ասավ պառավ տատին.
«Մտիկ չեմ տա ձեռիդ փետին,
Կարոտել եմ թմփլիկ ճուտին».
Անվախ աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն եկել, նստել դեզին,
Երկար ազին ծռել վզին,

Առաջադրանքներ

1. Բառարանի օգնությամբ բացատրի՛ր անհասկանալի բառերը:

Հ.Թումանյան

Աչք է ձգել մեր խորոզին...
Էն գող աղվեսն, ազին ծաղիկ:

Մին էլ կանչեց տատս պառավ.
Ամա՛ն, հասե՛ք, տարա՛վ,
կերա՛վ...
Գլխիս էս ի՞նչ փորձանք բերավ
Անտեր աղվեսն, ազին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմիր խորոզ,
Ման կուգայիր գոռոզ-գոռոզ.
Փետուրդ արավ ողջ դար ու փոս
Էն չար աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվե՛ս, աղվե՛ս, փոքրիկ գազան,
Ոտներդ կարճ ու խիստ վազան,
Շներն ամեն քեզ չհասան,
Ճարպիկ աղվես, ազին ծաղիկ:

2. Շարունակի՛ր ըստ օրինակի՝

մարդ-մարդիկ

աղվես-

մատ-

մկրատ-

ծաղիկ-

դուռ-

ժպիտ-

3. Լրացրու՛ բաց թողնված բառերը:

Մին էլ կանչեց _____ պառավ.

Ամա՛ն, _____, տարա՛վ, կերա՛վ...

Գլխիս էս ի՞նչ _____ բերավ

Անտեր աղվեսն, _____ ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմիր _____,

Ման _____ գոռոզ-գոռոզ.

Փետուրդ արավ ողջ դար ու փոս

Էն չար _____, ազի՛ն ծաղիկ:

4. Գտի՛ր Ա խմբի արտահայտությունների գույգերը Բ խմբում:

Ա. Գլուխ տալ, ականջ դնել, հոգին հանել, վիզ ծռել

Բ. Լսել, չարչարել, խնդրել, խոնարհվել

5. Կարդա՛ և լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Ամառվա մի օր ուղ__որները, կես__րվա շոգից սաստիկ հո__նած, ճանապար__ էին գնում: Նրանք տեսան մի սուսի, մոտեցան և պա__կեցին նրա ստվերում՝ հանգստանալու: Նայելով սոսու ոստերին՝ իրար մեջ խոսեցին.

- Բայց ախր անպտուղ է այդ ծառը և մար__կանց համար անօ__ուտ:

Սոսին նրանց տխրաձայն պատասխանեց.

- Ապերախտ եք դուք, իմ հովանուց օգտվում եք և տեղնուտեղն էլ ինձ անպտուղ ու ան__գուտ անվանում:

Այ__պես էլ որոշ մարդկանց բա__տը չի բերում. նրանք լավություն են անում մերձավորներին, բայց շնորհակալություն չեն ստանում:

Կաքավ (տեղեկատվական տեքստ)

Կաքավը գեղեցիկ, աղավնուց խոշոր թռչուն է: Նրա ոտքերը, կտուցն ու կոպերը կարմիր են, մարմինը՝ մոխրագույն: Հոնքերի շուրջը սև գիծ կա, որը հասնում է մինչև ականջները: Կաքավի քաշը 350 - 800 գրամ է: Կաքավները չվող թռչուններ են, ուշ աշնանը ոչ մեծ երամներով չվում են տաք երկրներ:

Կաքավի շատ տեսակներ կան: Հայաստանում բնակվում են քարակաքավն ու մոխրագույն կաքավը:

Քարակաքավն ապրում է ժայռոտ, քարքարոտ վայրերում: Մյուս կաքավներն իրենց բները սովորաբար հյուսում են գետնին, քարերի մեջ, թփերի տակ, լավ ծածկում են, քողարկում:

Մայիս-հունիս ամիսներին մայր (եգ) կաքավը 10 - 25 ձու է ածում, թուխս նստում: 23 - 25 օր հետո ձվից դուրս են գալիս նուրբ, շատ փոքրիկ ձագեր, որոնք 1- 2 օր հետո արդեն ոտքի են կանգնում: Շուտով այդ ձագերը ինքնուրույն են ապրում:

Կաքավները շատ չեն թռչում, կյանքի մեծ մասն անցկացնում են արտերում ու դաշտերում: Գեղեցիկ, հպարտ քայլվածք ունեն: Հայաստանում կաքավի անունով նույնիսկ տեղանուններ կան՝ Կաքավասար, Կաքավաձոր, Կաքավաբերդ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր այն տեղեկությունը, որը գիտեիր:

2. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Եկել էր հասուն մր_երով ծանրաբեռնված աշունը: Այգիներում սկսվել էր բերքահավաքը: Երեխաները որ_շել էին _գնել մեծերին: Շուտով աշխատանքը եռաց: Լսվում էր երեխաների ու մեծահասակների զվար_ծիծաղը: Մայրամուտին բոլորը խինդ ու ծիծաղով վերադար_ան գյուղ:

Կաքավ

Մշակումը՝ Արուսյակ Սահակյանի

Խոպոտ ձայն ունեցող ու ականջ չունեցող թռչունները չէին սիրում կարմիր կտուցով ու կարմիր տոտիկներով Կաքավին, որն օրնիբուն ման էր գալիս արտերում ու երգում: Նախանձից նրանց ձայնն ավելի էր խոպոտվում:

Մի օր հավաքվեցին ու գնացին Արծվի մոտ գանգաստ.

- Թագավորն ապրա՛ծ կենա, էդ Կաքավը անգործ-անբան, ամբողջ օրը երգում է, չի թողնում, որ քո հրամանները լսենք:

Արծիվն էլ երգի հետ գլուխ չուներ և հրամայեց.

- Կաքավին ասեք՝ թող էլ չերգի:

Կաքավը լռեց:

Արտերը սպասեցին, սպասեցին Կաքավի երգին, բայց Կաքավն էլ չէր երգում: Արտերը կարոտեցին Կաքավի երգին ու խնդիրքի գնացին Արծիվ թագավորին.

Թագավորն ապրա՛ծ կենա, կարմրակտուց, կարմրատոտիկ Կաքավը կա, բայց նրա երգն էլ չկա. մեր հասկերը չեն քաղցրանա:

Արծիվն ասաց՝ թող երգի՛:

Բայց Կաքավն արդեն մոռացել էր իր երգի խոսքերը, միայն մեկ բառ էր հիշում.

- Կըղա՛, կըղա՛:

Մի երկու բառ էլ արտերն էին հիշում.

- Կաղ-կըղա՛, շաղ-կըղա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձի՛ր բացատրել այս արտահայտությունները (դարձվածքները).

ականջ չունենալ -
զանգատ անել -
երգի հետ գլուխ չունենալ -
խնդիրքի գնալ -

2.Ինչո՞ւ մյուս թռչունները չէին սիրում կաքավին: Նշի՛ր այն հատվածը, որտեղ դա երևում է:

3.Ի՞նչ ասացին թռչունները արծվին: Նշի՛ր այն հատվածը, որտեղ դա երևում է:

4.Նկարագրի՛ր այս պատմության կաքավին:

5.Քո կարծիքով ինչի՞ մասին էր երգում կաքավը:

6.Ի՞նչ կլինի, եթե ոչ մի թռչուն չերգի:

7.Նամակ գրի՛ր արծիվ արքային:



Ձմեռ Պապիկին նամակ գրելու օր

Դեկտեմբերի 4-ը Ամանորին նվիրված շատ հետաքրքիր ու յուրահատուկ տոն է՝ Նվերների պատվերների և Ձմեռ Պապիկին նամակ գրելու օր:

Այդ օրը նվիրված է բոլոր նրանց, ովքեր հավատում են ձմեռային հրաշքին և անհամբերությամբ սպասում այդ հեքիաթային տոնին՝ Ամանորին, հայտնում է Calend.ru-ն:

Սովորաբար հենց դեկտեմբերի 4-ին աշխարհի շատ երկրներում փոստերն սկսում են Ձմեռ Պապիկին ուղղված նամակներն ուղարկելու ծառայությունները, կամ բացվում են հատուկ փոստային հաստատություններ, որտեղ բոլոր երեխաներն ու իրենց ծնողները կարող են նամակ ուղարկել՝ խնդրելով իրենց երկար սպասված նվերը, և այդ նամակներն անպայման կհասցվեն Ձմեռ Պապիկին:

Տոնի օրը շատ տրամաբանական է ընտրված: Շուտով Ամանոր է, բոլորը սպասում են հրաշքների, անակնկալների: Ամենուրեք տոնի նախապատրաստություններ են: Եվ ահա ճիշտ ժամանակն է, որպեսզի երազանք պահենք և նամակ գրենք գլախավոր հրաշագործ Ձմեռ Պապիկին:



Ձյուն

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Զգո՛ւյշ իջի՛ր աշխարհին,
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին:

Հանդա՛րտ, կամա՛ց իջի՛ր այնպես՝
Ծաղիկները չարթնանան,
Ծածկի՛ր նրանց քնքուշ ու հեզ,
Զգո՛ւյշ, զգո՛ւյշ անսահման:

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Հանգի՛ստ, խաղա՛ղ իջի՛ր վար,
Ծաղիկները մտել են քուն,
Ծաղիկները ցրտահար:

Գեղամ Սարյան

Հարցեր և առաջադրանքներ

1. Բանաստեղծության կրկնվող տողերը նշի՛ր:

2. Ի՞նչն էր ծաղիկների անկողինը:

3. Ինչպե՞ս պետք է ձյունը ծածկի ծաղիկներին: Նշի՛ր այդ տողերը:

4. Ձյան մասին հանելուկ հորինի՛ր:

5. Պատկերացրո՛ւ՝ հանդիպել ես մեկին, ով չգիտի, թե ինչ է ձյունը:

Պատմի՛ր նրան ձյան մասին:

6. Պատմի՛ր ծաղիկների մասին:

7. Նոր վերնագիր մտածի՛ր բանաստեղծության համար:



Եղևնին

Անտառից եկած կանաչ եղևնին,
Հիշում է կանաչ իր ընկերներին,
Արահետներն է հիշում ձյունի տակ,
Հիշում է բացատն ու բուքն սպիտակ:
Երկինքն է հիշում իր գլխի վերև,
Եվ իր մայր անտառն ասեղնատերև,
Հովերն է հիշում նա գարնանային,
Որ իրեն այնպես օրորում էին:
Վաղորդյան ցողի գոհարն է հիշում,
Եվ մայրամուտի թևերն արբեշում,
Հիշում է սուսափն ամեն մի ծառի,
Խարույկն է հիշում անտառապահի:
Հիշում է բոլորն ու չի ափսոսում,
Որ էլ անտառի երգը չի լսում,
Ինչո՞ւ ափսոսա, երբ իր թևերին
Գարուն է բերել երեխաներին,

Համո Սահյան

Գարուն է բերել այս ձմռան օրով
Եվ տուն է մտել կանաչ շորերով.
Ե՞րբ է նա այսպես զուգվել, զարդարվել
Եվ մարդկանց այսքան հրճվանք պատճառել,
Ե՞րբ է նա եղել այսքան երջանիկ
Ու ե՞րբ է տեսել այսքան խաղալիք:
Ե՞րբ են նրա մոտ այսքան մանուկներ
Երգել ու պարել մինչև ուշ գիշեր...
Զարդարանքներով, աստղերով իր պերճ
Կանգնել է ուրախ մանուկների մեջ,
Այնպես հպարտ է նայում աշխարհին,
Կարծես հենց ինքն է բերել Նոր տարին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Անհասկանալի բառերը դուրս գրի՛ր և բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

2. Ի՞նչ էր հիշում եղևնին: Պատմի՛ր եղևնու անունից:

3. Եղևնին ի՞նչ էր զգում անտառից հեռու:

4.Նա ավստո՞ւմ էր, որ այլևս անտառում չի:

5.Ինչո՞ւ էր նա հպարտ նայում աշխարհին:

6.Նամակ գրի՞ր եղևուն:



Հեքիաթ բախտը բերելու մասին

Մի անտառ կար: Այդ անտառում իրար կողքի երկու ծառեր էին աճում՝ ջահե՛լ, սիրո՛ւն: Երեկոները նրանք բախտի մասին էին փսփսում:

— Ես որ մեծանամ, բարձր ու մեծ ծառ եմ դառնալու, — ասում էր նրանցից մեկը, — թռչունները կապրեն իմ ճյուղերի մեջ: Բոլորը կհանգստանան իմ ստվերի տակ: Արևի շողերին և առավոտվա հովիկին առաջինը ես կդիմավորեմ: Մի քանի տարի հետո իմ տակ աճած ծառիկները կշրջապատեն ինձ: Նրանք փոքրիկ ու հրաշալի ծառեր կդառնան: — Չե՛, — ասում է մյուսը, — աճել-մեծանալը էնքան էլ լավ բան չի: Ձմռանը ցուրտն է ծեծում, ամռանն արևն է վառում: Ամբողջ օրն էլ արմատներդ պիտի աշխատեցնես, որ տերևներիդ ջուրը հասցնես, կշտացնես: Ավելի լավ է փայտահատն ինձ կտրի, հետո ինձնից մի հրաշալի բան սարքեն, դնեն փափուկ բարձի վրա:

Եվ ի՞նչ եղավ հետո: Եկավ մորուքավոր փայտահատը և կտրեց երկրորդ ծառը: Նրա մի մասը վառարանում վառեցին, մյուս մասից սիրուն զարդատուփ սարքեցին: Երկար ժամանակ տուփը բարձի վրա ապրեց՝ մեջը՝ սիրուն ականջօղե՛ր, մատանինե՛ր ու անուշահոտ օձանելիքներ: Հետո տուփը քիչ-քիչ հնացավ, չորացավ, փականը փչացավ, հալից

ընկավ: Էս խեղճ տուփը տվեցին փոքրիկներին, որ խաղան: Սրանք էլ խաղացին-խաղացին, վերջը տուփը ջարդեցին, մի կողմ գցեցին: Մինչև ձմեռ նրա տաշեղները դեռ բակում էին, հետո ինչ եղան, ոչ ոք չիմացավ: Այ, եթե քամին հարցնի առաջին ծառին, թե ինչ եղավ երկրորդ ծառը, նա կպատմի, որ հին տուփի տաշեղներով ագռավը բույն է հյուսել իր ճյուղերին: Այսպես երկու ընկերուհիներ գտել են իրար և զարմացել իրենց բարի բախտի վրա: Նրանք հասան իրենց ուզածին, դուք էլ ձերին կհասնեք:

Առաջադրանքներ

1. Ի՞նչ ես հասկանում /բախտը բերել է/ արտահայտությունը լսելիս:
2. Գրի՛ր, թե ինչում է քո բախտը բերել:

Անբան Հուռին

Հովհաննես Թումանյան



Լինում է, չի լինում մի կնիկ: Էս կնիկը մի աղջիկ է ունենում՝ անունը Հուռի: Մի ծուլ, անշնորհք աղջիկ: Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է.
Բամբակը կորիզոտ է:
Մաստակ պիտի, որ ծամեմ,
Կըտերը տիտիկ անեմ,
Անցնողին մըտիկ անեմ.
Ուտեմ, խմեմ,
Մըթնի, քընեմ:

Հարևանները անունը դնում են Անբան Հուռի: Ինչ մերն է՝ աղջկանը գովելով ման է գալի, լիղըր գգող, լիղըր մանող, համ խճճող, համ խճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները ոսկի:

Էս գովասանքը գնում մի երիտասարդ վաճառականի ականջն է ընկնում: Էս երիտասարդ վաճառականն ասում է՝ իմ ուզածն էլ հենց սա է, որ կա: Գլխապատառ գալիս է անբան Հուռիին ուզում է, հետը պսակվում, տանում իրենց տունը: Մի քանի ժամանակից ետը մի տասը-քսան բեռը բամբակ, է առնում տալիս կնկանը, թե՛ գնում եմ հեռու տեղեր առուտուրի, դու էլ էս բամբակը գգի, մանի, գամ տանեմ ծախեմ, հարստանանք:

Անբան Հուռին է, իրեն համար մաստակ ծամելով ման է գալի: Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ գորտերը կըռկըռում են:

—Փե՛փել... Կե՛կել... Փե՛փել... Կե՛կել...

— Վո՛ւյ, աղջի Փեփել, Կեկել,— ձեն է տալի անբան Հուռին,— որ բամբակը բերեմ ձեզ տամ՝ կզգեք...

— Բե՛ր, բե՛ր, բե՛ր...

Անբան Հուռին ուրախանում է: Գնում է բամբակը կրում բերում ածում գետը:

— Դե գզեցեք, մանեցեք: Մի քանի օրից ետ կգամ, մանածը կտանեմ, որ ծախենք:

Գնում է մի քանի օրից ետ է գալի: Գորտերը էլի կոկոում են.

— Փե՛փել-Կեկել... Փե՛փել-Կեկել...

— Աղջի Փեփե՛լ, Կեկել, դե մանածը բերեք:

Գորտերը շարունակում են կոկոալ, իսկ մանածը չեն բերում: Հուռին մին էլ որ նայում է, աչքովն ընկնում է գետի ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուռը:

— Վո՛ւյ,— ասում է,— քոռանամ ես, տե՛ս, համ գզել ու մանել են, համ խալիչա են գործել իրենց համար:

Ձեռը ճակատին է դնում ձեն տալի.

— Դե որ խալիչա եք գործել, մեր բամբակի փողը բերեք:— Ձեն է տալի ու ոտը փոխում է, մտնում ջուրը: Հանկարծ ոտը առնում է մի կոշտ բանի: Հանում է տեսնում՝ մի կտոր ոսկի: Փեփելին ու Կեկելին շնորհակալություն է անում, ոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն: Մարդն էլ առուտուրի տեղիցն է գալիս: Գալիս է տեսնում՝ իրենց թարեքին մի մեծ ոսկու կտոր:

— Այ կնիկ, էս ի՞նչ ոսկի է:

Թե՛ քա չես ասիլ բամբակը Փեփեղի ու Կեկեղի վրա ծախեցի. բամբակի փողն է:

Մարդը ո՛նց է ուրախանում, էնպես էլ դուք ուրախանաք: Չոքանչին հրավիրում է, ընծաներ է տալի, գովում է, շնորհակալություն է անում, որ էնպես խելոք, շնորհքով, աշխատասեր աղջիկ է մեծացրել: Քեֆ է սարքում, նստում են քեֆի:

Չոքանչը խորամանկ կին է լինում: Իմանում է, թե բանը ինչպես է պատահել. վախենում է փեսեն էլի աղջկանը գործ հանձնի, ու գաղտնիքը բացվի: Քեֆի լավ ժամանակը մի բզեզ է ներս մտնում ու բրոռացնելով պտտվում սենյակում: Էս զոքանչը վեր է կենում գլուխ է տալի բզեզին: Ասում է.

— Բարով եկար, մորքուր ջան, ո՛նց ես. ո՛րտեղ ես, էսքան ժամանակ չես երևում... Ախր քեզ ո՞վ էր ասում էդքան բան անես, որ էդ օրն ընկնես...

Փեսեն մնում է զարմացած: Ասում է.

— Այ մեր, խելագարվեցի՞ր, քեզ ի՞նչ պատահեց. էդ բզեզին էդ ի՞նչ ես ասում, մորաքո՞ւրս որն է...

Չոքանչը թե.

— Այ որդի, քեզանից ինչ թաքցնեմ, դու էլ իմ որդին ես: Չես ասիլ էս բզեզն իմ մորաքույրն է: Խեղճը շատ աշխատասեր կնիկ էր: Ամբողջ օրն աշխատում էր, շատ աշխատելուց կուչ եկավ, պստիկացավ, էնքան պստիկացավ, որ դառավ բզեզ: Մեր ցեղն էսպես է: Շատ աշխատասեր ենք: Բայց աշխատելուց պստիկանում, բզեզ ենք դառնում:

Էս որ փեսեն լսում է, վախից քիչ է մնում պռոշը ճաքի, էն է լինում որ էն, արգելում է Հուրիին ձեռն էլ բանի չտա, որ մորքուրի նման բզեզ չդառնա:

Առաջադրանքներ

1. Հեքիաթից գտի՛ր անծանոթ բառերը և առցանց բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

2. Փորձի՛ր բացատրել հետևյալ դարձվածները.

Ձայնը գլուխը զցել-----

Աչքովն ընկնել-----

Ականջն ընկնել-----

Մատները ոսկի-----

Օրը մինչև իրիկուն-----

Ձեռը բան չտալ-----

3. Հեքիաթից գտի՛ր Հուռուն բնութագրող բառերը, մի քանիսն էլ դու ավելացրու՛ :

4. Երեք նախադասությամբ պատմի՛ր Հուռու մոր մասին:

5. Կետադրի՛ր հետևյալ նախադասությունները.

Այ որդի քեզանից ինչ թաքցնեմ դու էլ իմ որդին ես

Վույ ասում է քոռանամ ես տես համ զգել ու մանել են համ խալիչա են գործել իրենց համար

Այ կնիկ ես ինչ ոսկի է

6. Հեքիաթից դուրս գրի՛ր հարցական բառերի պատասխանները և լրացրու՝ վանդակները.

Ի՞նչ, ինչե՞ր	Ո՞վ, ովքե՞ր	Ինչպիսի՞	Ինչպե՞ս

7. Եթե բզեզը չլիներ, հեքիաթն ինչպե՞ս կավարտվեր: Հորինի՛ր նոր ավարտ հեքիաթի համար:



Ամենից լավ տունը

Հովհաննես Թումանյան

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
Մի հին խրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,

Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Թո՛ղ գնամ շրջեմ աշխարհից աշխարհ,
Ճամփորդեմ լավ-լավ տներ տեսնելու,
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,

Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու
Էս գորշ խրրճիթից,
Էս հին խրրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Ու գնաց, երկար թափառեց տղան,
Մեծ ու հոյակապ շատ տներ տեսավ,
Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...
Ու հառաչելով ետ վերադարձավ
Էն գորշ խրրճիթը,
Էն հին խրրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

«Գտա՞ր, գավա՛կս», հարցրեց մայրը,
Ուրախ, նայելով իր տղի վրա:

«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Առաջադրանքներ

1. Բնութագրի՛ր բանաստեղծության տղային, մորը:

2. Ի՞նչ երազանք ուներ տղան:

3.Նկարագրի՛ր տղայի խրճիթը:

4.Պատմի՛ր քո երազանքի մասին. արդյո՞ք սիրում ես քո տունը, կուզեի՞ր ուրիշ տուն գտնել քեզ համար:

5.Առաջադրանքները կատարի՛ր, բանաստեղծությունն ու առաջադրանքները սեղադրի՛ր բլոգումդ:



Շունն ու կատուն

Հովհաննես Թումանյան

I

Ժամանակով Կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գդակ չունէր,
Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի,
Ճանկել էր մի գառան մորթի:

Եկավ մի օր, ձմեռվան մտին,
Կատվի կուշտը տարավ մորթին:

— Բարի աջողում, ուստա Փիտ,
Գլուխս մրսեց, ի սեր Աստծո,
Ա՛ն էս մորթին ու ինձ համար

Մի գդակ կարի գլխիս հարմար:
Վարձիդ համար միամիտ մնա՛,
Համա-համա շատ չուշանա:

— Աչքիս վրա, քեռի Քուչի,
Մի գդակ ա, հո մի քուրք չի.

Քու թանկագին խաթեր համար
Ուրբաթ օրը համեցեք տար:
Փողի մասին ավելորդ ա,

Մեր մեջ խոսելն էլ ամոթ ա,
Ի՛նչ մեծ բան ա, տո՛ւ, հե՛ր օրհնած,

Միա՛յն, միա՛յն մի գդակի վարձ:

Ուրբաթ օրը քեռի Քուչին՝
Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին
Թափ-թափ տալով՝ **ծանդր** ու **մեծ**,
Ուստա Կատվի շեմքում կանգնեց.

— Ուստեն ո՞ւր ա... **փափախս** ո՞ւր ա...

— Մի քիչ կացի, հրես կերևա:

II

Ուստեն եկավ քուրքը հագին,
Շանը տեսավ, բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փնթփնթաց,

Ու մուշտարու վրա թնդաց.
— **Ցուրտը** տարա՛վ... վա՛հ, տնա՛շեն,
Չես թող անում մի շունչ քաշեն.
Հեշտ բան հո չի՞, հլա նոր եմ
Ցրցամ տվել, թե որ կարեմ:

— Դե հե՛ր օրհնած, էտե՛նց ասա,
Էդ **բարկանալդ** էլ ընչի՞ս ա:
Փող եմ տվել, վախտին կարի,
Թե չէ՛ ասա, էգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,

Համ **խոսում** ես, վրես գոռում,
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի, ախպեր, գնամ ու գամ...

Ասավ Քուչին ու նեղացած
Վերադարձավ գլուխը բաց:

III

Մին էլ եկավ, դարձյալ չկար.
Էս անգամը դիպան իրար.
Էլ **անպատիվ**, անկարգ խոսքեր,
Էլ հին ու նո՛ր, էլ հերն ու մե՛ր,
Էլ գող Փիսո՛, էլ քաչալ Շո՛ւն...

Բանը հասավ դիվանբաշուն:
Շունը մինչև **գնաց**, եկավ,
Ուստա Կատուն կոտրն ընկավ,
Գլուխն առավ ու մի **գիշեր**
Հայդե՛, **կորավ**. Էն կորչիլն էր...

IV

Էն օրվանից մինչև օրս էլ
Շունն էս բանը չի **մոռացել**,
Մտքում հլա դեռ պահում ա,
Որտեղ Կատվին պատահում ա,
Վեր ա թռչում, վրա վազում,

Իրեն մորթին ետ ա ուզում.
Իսկ սներես Կատուն հանկարծ
Ետ ա դառնում ու բարկացած
Փշտացնում ա. մթամ նոր եմ
Ցրցամ տվել, թե որ կարեմ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Քանի՞ հերոս կա հեքիաթում: Թվարկի՞ր նրանց անունները:
2. Դուրս գրի՞ր ընդգծված բառերը և գրի՞ր դրանց հակառակ և նույն իմաստն ունեցող բառերը:
3. Անձանոթ բառերը բացատրի՞ր, օգտվի՞ր առցանց բառարանից:
4. Նշի՞ր հեքիաթի ամենատրախ հատվածը:
5. Նշի՞ր հեքիաթի ամենատխուր հատվածը:
6. Ինչպիսի՞ն է կատուն, բնութագրի՞ր նրան:
7. Ինչպիսի՞ն էր շունը:
8. Արդարացրո՞ւ կատվին:
9. Կատվի անունից շանը նամակ գրի՞ր և ներողություն խնդրի՞ր նրանից:



Ճանապարհորդ Չեկոն

Ստեփան Չորյան

Մի անգամ աշնանը ես մի ուրախ ճանապարհորդություն կատարեցի դեպի Երևան: Լենինական քաղաքից մի պառավ՝ զամբյուղը ձեռին եկավ՝ մտավ մեր վագոնը:

- Կարելի՞ է:

- Համեցե՛ք, մայրիկ, համեցե՛ք...

Եվ մենք չորս հոգով մի կողմ քաշվեցինք ու պառավին տեղ տվինք մեր նստարանի վրա: Պառավը նստեց, զամբյուղը դրեց ոտների տակ ու փեշերով ծածկեց խնամքով. հետ գրպանից մի գիրք հանեց, ակնոցը դրեց աչքերին ու սկսեց կարդալ: Եվ էլ ոչ մի խոսք: Չորս հոգի նստած ենք կողք կողքի, ոչ մեկս չի հարցնում ո՞վ եք, ո՞ր եք գնում, ինչպես լինում է առհասարակ:

Է՛հ, պատահում են այդպիսի մարդիկ էլ, որ խոսել չեն սիրում:

Այդպես անխոս գնում ենք մի փոքր տեղ, մեկ էլ տեսնեմ պառավի զամբյուղի մեջ ինչ-որ բան է շարժվում:

«Երևի հավ է», - մտածում եմ:

Բայց պառավն այդ շարժումից անհանգստացավ, անմիջապես ոտքով խփեց զամբյուղին և փեշերով ավելի ծածկեց:

Մի կարճ տարածություն նա ոտն այնպես մի քանի անգամ զարկեց զամբյուղին ու շարունակեց անխոս կարդալ:

Մի քիչ էլ գնացինք, զամբյուղից ճանկոտոց լավեց:

Այս անգամ պառավը փեշերը ետ տարավ ու կոացավ զամբյուղի վրա և կամաց, շատ կամաց, հազիվ լսելի ձայնով սաստեց.

- Մո՛ւս, սո՛ւս, անպիտան:

Մեր կուպեի ճամփորդները զարմացած իրար նայեցին, իսկ ես մտածեցի, որ զամբյուղինը հավ չի, այլ երևի կատու:

Գնացինք մի փոքր էլ, կոնդուկտորը եկավ տոմսերն ստուգելու:

- Ձեր տոմսը, ձեր տոմսը,- կրկնում էր նա բարձրաձայն:

Եվ այդ ժամանակ ահա պառավի փեշերի տակից հանկարծ.

- Հա՛ ֆ-հա՛ ֆ-հա՛ ֆ...

Վագոնը լցվեց շան հաչոցով:

Ճամփորդները եկան հավաքվեցին հաչոցի վրա, իսկ պառավն, իրեն կորցրած, ոտով խփում էր զամբյուղին և շարունակ շշնջում.

- Ջեկո՛, Ջեկո՛, անպիտա՛ն...

Շունը բոլորովին չի լսում. հաչում է, կլանչում և զամբյուղը ճանկոտում:

Բարկացած կոնդուկտորը կռացավ և վախվիսելով զամբյուղը բաց արավ.

նապաստակի արագությամբ դուրս նետվեց մի պստիկ, կատվից էլ փոքր ճերմակ շնիկ՝ վզին կապույտ ժապավենից մի բանթ:

Դուրս նետվելով՝ նա մի ակնթարթ իր խոշոր, սև աչքերով նայեց

անձանոթ դեմքերին և, պառավին նկատելով, թռավ նրա գոգը:

- Սա ի՞նչ բան է,- ասում է կոնդուկտորը,- ձեզ ո՞վ իրավունք տվեց շանը բերել վագոն:

- Ի՛նչ կա որ,- ասում է պառավը շանը գրկելով,- զամբյուղի մեջ ձեզ հո վնաս չի տալիս:

- Շունը վագոն մտցնելու իրավունք չկա,- զայրանում է կոնդուկտորը:-

Եկող կայարանում կա՛ մ կիջնեք, կա՛ մ շանը կթողնեք:

- Վա՛յ, ես իմ Ջեկոյին չեմ թողնի: Գրկիս կպահեմ:

- Չի՛ կարելի,- կտրեց կոնդուկտորն ու անցավ մյուս ճամփորդների տոմսերն ստուգելու:

Հասանք կայարան. պառավը շփոթված սկսեց շանը փաթաթել փալասներով, երևի այդպես պահելու, որ չհեռացնեն: Բայց կոնդուկտորը շուտով վերադարձավ:

- Դե, մայրիկ, կա՛ մ իջեք, կա՛ մ շանը թողեք էս կայարանում:

Պառավը չի համաձայնում:

- Չեմ կարող,- ասում է,- շունը թողնել: Սա տղայինս է. դրել է, որ տանեմ Երևան: Կմեռնեմ՝ չեմ թողնի:

- Դե՛ իջեք:

- Ո՛չ կիջնեմ, ո՛չ կթողնեմ...

Երկար նա իրենն էր ասում, սա՝ իրենը, մեկ էլ կոնդուկտորը նեղսրտած առաջ եկավ:

- Հասկացի՛ր, մայրիկ, ես իրավունք չունեմ վագոնում շուն թողնելու:

Այս ասելով՝ նա շանը իլեց պառավի ձեռքից և կլանչեցնելով տարավ դռնից գցեց դուրս:

Պառավը ճղճղաց ու վագեց կոնդուկտորի ետևից, բայց մինչև կերթար դեպի դուռը, գնացքը շարժվեց:

Պառավը մնաց շվարած:

- Վա՛յ, հիմա ես ի՛նչ պատասխան տամ տղիս:

Ու մինչև մյուս կայարանը նա ձեռները խփում էր ծնկներին ու վշտացած տրորվում, հուզվում.

- Վա՛յ: Ջեկո ջան, քեզ պահեցի, որ կորցնե՛մ: Վա՛յ, Ջեկո ջան...

Այսպես հասանք մյուս կայարանը. հազիվ գնացքը կանգնել էր՝ մեկ էլ պառավի շնիկը, լեզուն հանած, վագեվագ ընկավ վագոն և թռավ պառավի գոգը:

Ճամփորդները զարմանքից վեր կացան:

- Ա՛, եկա վ, շունն եկա վ,- ձայն տվին իրար ու հավաքվեցին շան գլխին:

Աղմուկի վրա կոնդուկտորը նորից երևաց:

- Էդ ինչպե՛ս, որտեղի՞ց եկավ,- զարմացավ նա:

- Չե՛ք տեսնում ո՛նց է հնում,- նկատեց մեկը,- գնացքի ետևից վագել է, էլի:

Վագել լ... ամենքը զարմացած էին, թե ի՛նչպես է կարողացել մի

կայարանից մինչև մյուսը վագել այս պստիկ շունը, ինչպե՛ս շունչը չի կտրվել...

Բայց ինչ ասես, որ եկել էր:

Սակայն բոլորից շատ զարմացած էր պառավը, նա ուրախությունից շանը սեղմում էր կրծքին ու կրկնում.

- Ջեկո՛ ջան, Ջեկո՛...

Իսկ Ջեկոն ետին ոտներով կանգնում էր նրա գոգին, առաջին ոտները դնում նրա կրծքին և ուզում էր կարծես համբուրել նրա երեսը, բայց երեսին չհասնելով՝ լիզում էր ձեռները:

Բոլորս ծիծաղում էինք, ուրախանում, իսկ կոնդուկտորը նորից կպավ պառավին՝ թե՛ կա մ պիտի իջնես, կա մ շունդ կթողնեմ կայարանում...

Պառավը նորից պինդ գրկեց շանը, որ կոնդուկտորը չտանի. խնդրեց, աղաչեց, որ թողնի, փող կտա, տոմս կառնի:

Բայց կոնդուկտորը դարձյալ լսել չուզեց, ու շանը քաշեց իր կողմը:

- Ես իրավունք չունեմ վագոնը շուն թողնելու, ինձ պաշտոնից դուրս կանեն, հասկացի՞ր, պառավ, հասկացի՞ր:

Ու նորից շունը կլանչեցնելով տարավ դրեց պլատֆորմի վրա և ինքը բարձրանալով, վագոնի դուռը փակեց:

Այս անգամ պառավը լաց եղավ:

Իսկ ես, խղճալով թե՛ պառավին և թե՛ շանը, գլուխս վագոնի լուսամասից հանած՝ նայում եմ տեսնեմ՝ ինչ է անելու խեղճ շնիկը այդ անձանոթ կայարանում:

Երբ գնացքը շարժվեց Ջեկոն սկզբում շշմած, պոչը ետին ոտների արանքը կոխած, նայեց շարժվող վագոններին, ապա մեկեն սկսեց վազել գնացքի կողքով:

Գնացքն արագացրեց ընթացքը, Ջեկոն նույնպես, նա վագում էր գլուխն ուսերին դրած, այնպես, ինչպես նապաստակն է վագում. ցատկելով, թռչելով... վազեց-վազեց, մեկ էլ՝ ըհը՝ թռավ վերջին վագոնի սանդուղքի վրա և նստեց լեզուն հանած:

Ուրախությունից ուզեցի մյուս ճամփորդներին պատմեմ Ջեկոյի ճարպիկությունը և ցույց տամ նրա տեղը, բայց մտածելով, որ բանը կոնդուկտորի ականջը կրնկնի, լռեցի: Լավ էր, որ ուրիշ ճամփորդ չէր նկատել, և նա մնաց այդպես մինչև մյուս կայարանը:

Ու երբ հասանք մյուս կայարանը, Ջեկոն նորից եկավ պառավի գոգն ընկավ: Նորից ծիծաղ, ուրախություն: Պառավը համբուրում է Ջեկոյին ու ծիծաղում մյուսների հետ:

Եկավ կոնդուկտորն էլ, ուզեց բարկանալ, բայց իմանալով բանն ինչպես է եղել, ինքն էլ սկսեց ծիծաղել:

- Դե որ էդպես է, նորից զամբյուղը դիր, մայրիկ,- ասաց նա:- Միևնույն է, դա արդեն սովորել է առանց տոմսի ճամփորդել: Ջեկոն, կարծես կոնդուկտորի խոսքերը հասկանալով, ինքը թռավ-մտավ զամբյուղը: Պառավը կափարիչը վրա բերեց, նորից ոտը դրեց վրան և փեշերով ծածկեց: Ջեկոն հիմա հանգիստ էր. ո՛չ շարժվում էր զամբյուղում, ոչ ճանկոտտում այն, ո՛չ էլ հաչում:

Եվ այդպես հասանք Երևան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմվածքից դուրս գրի՛ր անձանոթ բառերն ու օնլայն բառարանի օգնությամբ բացատրի՛ր:

2. Այս դարձվածքները փոխարինի՛ր մեկ բառով.

ձայն ծպտուն չհանել -

իրավունք տալ -

վնաս տալ -

3. Ո՞վ է պատմում այս պատմությունը. ճիշտ պատասխանը նշի՛ր.

պառավը

ուղեկցորդը

ճանապարհորդներից մեկը

4. Ի՞նչ կպատմես շնիկի մասին:


5. Արդարացրու՛ տատիկին:

6. Արդարացրու՛ կոնդուկտորին:

7. Մեղադրի՛ր տատիկին:

8. Մեղադրի՛ր կոնդուկտորին:

9. Հորինի՛ր պատում՝ «Ջեկոյի նոր արկածները» վերնագրով:



Կապույտ լուսակիրը

Չաննի Ռոդարի

Մի անգամ Միլանի Դուոմոյի հրապարակի լուսակիրը մի տարօրինակ բան արեց: Նրա բոլոր լույսերը հանկարծակի կապույտ դարձան, և մարդիկ չգիտեին՝ ինչպես վարվել:

-Փողոցն անցնե՞նք, թե՞ չանցնենք: Կանգնած մնա՞նք, թե՞ չմնանք:

Իր բոլոր «աչքերից» բոլոր ուղղություններով լուսակիրն անսովոր կապույտ ազդանշան էր տալիս, այնպիսի կապույտ, ինչպիսին Միլանի երկինքը երբեք չէր եղել:

Սպասելով, որ ինչ-որ բան կհասկանան, մեքենաների վարորդները գոռոգոռում էին և ազդանշան տալիս, մոտոցիկլիստները շարժիչներին ստիպում էին մոնչալ, իսկ ամենագեր հետիոտները բղավում էին.

-Դուք չգիտեք, թե ես ով եմ:

Սրամիտները կատակներ էին անում.

-Կանաչը պաշտոնյաներից մեկը կերած կլինի քաղաքից դուրս ամառանոց կառուցելու համար:

-Կարմիրն օգտագործել են «Ջարդինի» այգիների ձկներին ներկելու համար:

-Իսկ գիտե՞ք՝ ինչ են անելու դեղինի հետ: Ավելացնելու են ձիթապտղի յուղին:

Վերջապես ժամանեց մի ոստիկան և կանգնեց խաչմերուկի մեջտեղում՝ երթևեկությունը կարգավորելու համար: Մի ուրիշ ոստիկան գտավ կառավարման վահանակը, որպեսզի ուղղի թերությունը, և անշատեց հոսանքը:

Մինչև անջատվելը լուսակիրը հասցրեց մտածել. «Խեղճեր: Ես նրանց ազատ ճանապարհի ազդանշանն էի տվել երկնքի համար: Եթե ինձ հասկանային, հիմա բոլորը թռչել կհիմանային: Բայց միգուցե քաջությունը չբավականացրեց»:

Առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր բոլոր հատկանիշ և գործողություն ցույց տվող բառերը:

2. Գրի՛ր հետևյալ բառերի ուղիղ ձևերը.

հասկանային, կհիմանային, կառավարման, կառուցելու, ներկելու

3. Պատասխանի՛ր հետևյալ հարցերին.

Ի՞նչ տարօրինակ բան արեց լուսակիրը:

Ի՞նչ էր մտածում լուսակիրը:

Ի՞նչ պատահեց, երբ լուսակիրը կապույտ ազդանշան տվեց:

Լրացուցիչ աշխատանք

Համացանցից գտի՛ր, թե որ երկրի քաղաքներից է Միլանը, ի՞նչ հետաքրքիր տեղեկություններ կարող ես գտնել այդ երկրի և քաղաքի մասին: Ո՞ր հայտնի մարդիկ են ծնվել այդ երկրում:



Հիշողություն Ղազարոս Աղայան

Ծիծեռնակը բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, ն՛ էրգում,
Ամեն մի շուղ կայցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում:

Մեկ անգամ էր նա բույն շինել
Եվ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ վերադարձին
Բույնն **ավերակ** էր գտել:
Այժմ նորից բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, ն՛ էրգում,
Ամեն մի շուղ կայցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում:

Նա հիշում էր անցած տարին
Իր **սնուցած** ձագերին,
Որոնց ճամփին հափշտակեց
Արյունարբու թշնամին:

Բայց նա կրկին բույն էր շինում,
Ե՛վ շինում էր ն՛ էրգում,

Ամեն մի շյուղ կայցնելիս՝
Առաջվա բույնն էր հիշում:

Առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անձանոթ բառերը և բառարանի օգնությամբ փորձի՛ր բացատրել:

2. Դուրս գրի՛ր մզեցված բառերը: Փորձի՛ր գտնել այդ բառերին իմաստով մոտ բառեր:

3. Ի՞նչ գիտես ծիծեռնակների մասին: Եթե չգիտես, փորձի՛ր տեղեկություններ գտնել համացանցից:

4. Նկարի՛ր բանաստեղծությունը և տեղադրի՛ր քո բլոգում:



Աչքերի գանգատը

Ջ. Ռոդարի

Գիտե՞ք, որ աչքերն էլ են **գանգատվում**: Չե՞ք հավատում: Մի անգամ իմ բախտը բերեց, ես կարողացա լսել, թե ինչպես են նրանք բողոքում:

— Ոչ ոք չգիտի, ասում էր նա, — թե ի՞նչ **թշվառ** եմ ես: Արդեն մի քանի դար է, ինչ իմ կյանքը **անտանելի** է դարձել: Ես միշտ տեսնում էի, որ Արեգակը պտտվում է Երկրի շուրջը: Բայց **հայտնվեցին** Կոպերնիկոսն ու Գալիլեյը և **ապացուցեցին**, որ ես սխալվում եմ, ամեն ինչ հակառակն է՝ Երկիրն է պտտվում Արեգակի շուրջը:

Նայում էի ես ջրի մեջ և տեսնում, որ նա **մաքուր** է և թափանցիկ: Բայց հայտնվեց մի հոլանդացի Լևենգուկ, **ստեղծեց** մանրադիտակը և հայտարարեց, որ մի կաթիլ ջրում ավելի շատ կենդանի **էակ** կա, քան **գազանանոցում**:

Հիմա էլ, տես, գիշերը նայում եմ երկնքին, ա՛յ այնտեղ՝ վերև: Երկինքը սև է, ինչպես կասկածներն են լինում: Ամեն ինչ ինձ համար պարզ է, ախր ես **հրաշալի** տեսողություն ունեմ: Բայց ստացվում է, որ ես էլի սխալվում եմ: Ինձ մոտեցնում են աստղադիտակին, որն ուղղված էր դեպի երկինք, և հանկարծ ես տեսնում եմ, որ այնտեղ միլիոնավոր աստղեր կան: Այնպես որ հիմա, ուզեմ թե չուզեմ, ապացուցված է, որ ես ամեն ինչ սխալ եմ տեսնում: Երևի ավելի կլինի, որ ես անցնեմ թոշակի:

Առաջադրանքներ

1. Գտի՛ր մզեցված բառերի իմաստով նույն բառերը:

2. Հորինի՛ր փոքրիկ պատում՝ «Ականջների գանգատը» վերնագրով:

Մեղուն ու մարդը

Ղազարոս Աղայան

Մեղուն մեկ անգամ հարցրեց իր տիրոջը:

— Քո կենդանիներից ո՞րն է ամենից օգտակարը:

— Գիտեմ, դու երևի կարծում ես, թե ամենից օգտակարը դու ես, բայց սխալվում ես, —

պատասխանեց տերը:

— Ինչպե՞ս, տեր, ո՞րն է այն կենդանին, որ ինձանից ավելի օգտակար է:

— Ոչխարը:

— Այդ հաշիվ չէ, տեր. ոչխարը իմ հասակակից չէ: Նա մի ահագին կենդանի է, իսկ ես մի

միջատ եմ: Դու պետք է ինձ իմ ընկերների հետ համեմատես:

— Շատ բարի. շերամը քեզ պես փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

— Շերամը ո՞րն է:

— Շերամն այն իմաստուն որդն է, որ մեզ համար աննման քնքուշ մետաքս է շինում:

— Հա՛, իմացա, այդ այն շատակեր ճիճուն չէ՞, որին անդադար կերակրում եք թթան տերևներով:

— Նա ինքն է:

— Բայց գիտե՞ս, տեր, նրա չափ որ մեզ էլ կերակրեք, մենք մեղրի տեղ ոսկի կշինենք ձեզ

համար: Դուք ոչ մի կենդանի չունեք, որ իր կերակուրը մեզ նման ինքը լինի շինելիս և

ուրիշներին էլ բաժին լինի տալիս: Այնպես չէ՞, պարոնս:

— Այո, այդ կողմից դու ուղիղ ես. մենք դեպի ձեզ շատ ապերախտ ենք, որովհետև

բոլորովին անխնամ ենք թողնում ձեզ...

Մեղուն ուրախացավ տիրոջ պատասխանիցը և թռավ նստեց վարդենու վրա:

Առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անձանոթ բառերը, բացատրի՛ր առցանց բառարանի օգնությամբ:

2. Առակից գտի՛ր բոլոր **ինչպիսի՞** հարցին պատասխանող բառերը, նրանց ավելացրու՛ **ի՞նչ** հարցին պատասխանող բառեր, ստացի՛ր բառակապակցություններ:

3. Ստացված բառակապակցություններով հորինի՛ր փոքրիկ պատում:



Թափանցիկ Չակումն

Չանի Ռոդարի

Վաղուց, շահ տ վաղուց, կարող է մի-քիչ շուտ, աշխարհի ծայրին, կամ կարող է մի քիչ ավելի մոտ, չտեսնված մի թագավորության մայրաքաղաքում ծնվեց մի թափանցիկ տղա: Թափանցիկ, այնքան թափանցիկ, որ նրա միջից կարելի էր տեսնել ամեն բան՝ ինչպես օդի մեջ կամ ինչպես աղբյուրի պարզ ջրի մեջ: Նա էլ մարմին ու արյուն ուներ, ինչպես բոլորը: Ճիշտ է, թափանցիկ էր, ապակու նման, բայց երբ ընկնում էր, չէր փշրվում, ամենաշատը՝ ճակատին մի փոքրիկ, թափանցիկ ուռուցք էր ծլում:

Բոլորը տեսնում էին, թե ինչպես է նրա արյունը շարժվում, ինչպես է նրա սիրտն աշխատում: Պատկերացնում էք՝ նրա մտքերն էլ էին պարզ երևում. մարդիկ ազատ կարդում էին դրանք: Մտքերը անցնում-դառնում էին նրա գլխում, լողում և փայլվում, ինչպես ձկների խմբերը թափանցիկ ջրավազանում:

Մի անգամ տղան սխալվեց ու սուտ ասաց: Ասաց ու մարդիկ կրակե գնդիկի նման մի բան տեսան նրա ճակատին: Երբ տղան ուղղեց իր սխալը և ճիշտ խոսեց, գնդիկը հալվեց, անհետացավ: Այդ օրվանից նա իր ամբողջ կյանքում ոչ մի տառ սուտ չասաց: Մի անգամ Չակումնոյի ընկերը նրան մի գաղտնիք ասաց: Բայց ի՞նչ գաղտնիք, ի՞նչ բան, բոլորը միանգամից տեսան, թե նրա գլխում ինչպես սկսեց մի սև գունդ պտտվել: Բա՛:

Ժամանակ անցավ, տղան մեծացավ, մեծ տղա դարձավ, հետո տղամարդ: Առաջվա նման բոլորը հեշտ ու հանգիստ կարդում էին նրա մտքերը: Նա կարող էր բարձրաձայն չպատասխանել այն հարցերին, որ մարդիկ իրեն

Էին տալիս. մեկ է, ամեն ինչ երևում էր:

Երբ տղան ծնվեց, նրա անունը Ջակոմո դեցին, քայց ժողովուրդը Թափանցիկ Ջակոմո էր ասում և շատ էր սիրում նրան իր ազնվության համար:

Նրա կողքին բոլորը իր նման բարի ու ազնիվ էին դառնում:

Դժբախտաբար այդ պետության ղեկավար դարձավ դաժան ու չար մի մարդ: Ժողովրդը վատ վիճակի մեջ ընկավ: Բոլորին ճնշում էին, բոլորն աղքատ էին: Ով բողոքում էր, դաժան բռնակալը հրամայում էր մահապատժի ենթարկել:

Ժողովուրդը ձայն չէր հանում, լուռ համբերում էր, որովհետև վախենում էր, որ կարող է ավելի վատ բան լինել:

Բայց Ջակոմոն չէր կարող լռել: Եթե ոչ մի բառ էլ չասեր, մեկ է, նրա մտքերը երևում էին: Չէ՞ որ նա թափանցիկ էր: Բոլորը տեսնում էին, թե ինչպես էր նա բարկանում անարդարությունից, պատիժներից և ատում դաժան ղեկավարին:

Մարդիկ մտքում գաղտնի կրկնում էին Ջակոմոյի մտքերը:

Բռնակալն իմանում է այդ մասին, հրամայում է բռնել Թափանցիկ Ջակոմոյին և գցել ամենամութ բանտը:

Հենց այդ ժամանակ էլ զարմանալի մի բան է պատահում: Ջակոմոյի բանտախցի պատերը հանկարծ թափանցիկ են դառնում, հետո թափանցիկ են դառնում միջանցքի պատերը, հետո՝ բանտի դրսի պատերը. ամբողջ բանտը ոնց որ ապակուց լիներ:

Մարդիկ անցնում էին բանտի մոտով, տեսնում էին Ջակոմոյին՝ իր բանտախցում նստած, և առաջվա նման կարդում էին նրա մտքերը:

Երբ գիշերն իջնում է, բանտն այնքան պայծառ է լուսավորում քաղաքը, որ բռնակալը հրամայում է փակել իր պալատի լուսամուտները, որ լույսն իրեն չխանգարի: Բայց, մեկ է, նա չի կարողանում հանգիստ քնել: Ինչ անենք, որ թափանցիկ Ջակոմոն շղթայված էր և փակված էր ամենամութ բանտում: Փակված էր, քայց էլի նրանից ուժեղ լույս էր գալիս:

Գիտե՞ք, թե ինչու... Որովհետև աշխարհի ամենաուժեղ բանը ճշմարտությունն է, այն ավելի պայծառ է, քան՝ ցերեկվա լույսը, և ավելի ուժեղ է բոլոր փոթորիկներից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Քո կարծիքով թափանցիկ Չակոմոյի կերած բանե՞րն էլ էին երևում, թե՞ միայն մտքերն էին երևում:

2. Քո շրջապատում կա՞ն թափանցիկ մարդիկ:

3. Ի՞նչ ես կարծում, լա՞վ կլիներ, եթե մարդիկ թափանցիկ լինեին և նրանց բոլոր մտքերը բոլորը տեսնեին: Պատասխանող հիմնավորի՛ր:

4. Կարծում ես, Չակոմոն իրո՞ք ք թափանցիկ էր, թե դա հեղինակը փոխաբերական իմաստով է ասում:

5. Քո կարծիքով, լա՞վ, թե վատ բանի մասին էր պատմվածքը, ինչո՞ւ ես այդպես կարծում:

6. Քեզ ի՞նչ սովորեցրեց այս պատմվածքը:

7. Դուրս գրի՛ր 10-ական **ի՞նչ** և **ինչպիսի՞** հարցերին պատասխանող բառեր:

Արև

Ղազարոս Աղայան



Արև՛, արև՛, դու մեզնից
Երբ հեռացար դեպ հարավ,
Ձմեռն եկավ և ամեն ինչ
Հափշտակեց ու տարավ:

Աստված սիրես, էլ մի՛ գնար,
Մի՛ թողնիր մեզ քեզ կարոտ,
Քեզ կպատվենք, քեզ կգովենք
Միշտ՝ իրիկուն, առավոտ:

Որքան գոհ ենք, որ դու բերիր
Գարնան անուշ եղանակ,
Ա՛խ, երանի գարուն լինի
Տարին բոլոր ժամանակ:

Տես թե ինչպե՛ս փթթել են
Ծառ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Տես թե ինչպես տարածվել է
Ամենայն տեղ անուշ հոտ:

Քեզ են գովում թռչնիկները
Իրանց քաղցր դայլայլով,
Հովիվը իր մեղմ սրինգով,
Հողատն անուշ հոլովով:

Չէ՛, արև ջան, էլ չգնաս,
Էլ չթողնես մեզ կարոտ,
Գնա քնի՛ր գիշերները,
Առավոտը եկ մեզ մոտ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գիտես արևի մասին: Եթե չգիտես, փորձի՛ր տեղեկություններ գտնել համացանցից:

2. Նամակ գրի՛ր արևին:

Ծառերի գանգատը

Չանի Ռոդարի



Մեր տված փայտից կրակ են անում, տուն տաքացնում, թոնիրը վառում, կերակուր եփում, փափուկ հաց թխում, ուտում կշտանում, բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ **անգուրթ** կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, **ոչնչացնում**: Մեր գերաններից շինում են տներ, գուներ, մարագներ, ժամեր ու վանքեր, մեր տախտակներից՝ հատակ, առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նստարան, դուռ ու պատուհան և այլ շատ տեսակ կահ և կարասիք. բայց մեզ չեն հիշում, մեզ չեն **պահպանում**, այլ **անգուրթ** կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, **ոչնչացնում**: Կամուրջ են **շինում**՝ գետերով անցնում. սայլեր են շինում՝ ամեն ինչ կրում. գուրթան են շինում հողերը հերկում. լուծ, սամի շինում եզ, գոմեշ լծում, օրորոց շինում՝ մանկիկ օրորում. քանոն են շինում՝ տետրակներ տողում, նավեր են շինում՝ ծովի մեջ լողում... Բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ **անգուրթ** կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, **ոչնչացնում**: Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խնձոր, նուր ու սերկևիլ, կեռաս ու սալոր, դեղձ կարմրաթշիկ, ծիրան անուշիկ: Ապա խաղո՞ղբ. և քանի՞ տեսակ կանաչ ու կարմիր, թուխ —

թուխ ու սպիտակ. և այդ ամենը մարդիկ են ուտում... Բայց մեզ չեն հիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ **կոտորում** են, մեզ փչացնում, ոչնչացնում:
Խելոք մանուկներ, դուք որ մեծանաք, մեծ մարդիկ դառնաք, մեզ **խնայեցեք**, մեզ պահպանեցեք և ձեր հանդերում, ձեր այգիներում ծառեր տնկեցեք...

Առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր քեզ անձանոթ բառերը:
2. Կարմիրով նշված բառերը գրի՛ր ուղիղ ձևով և գտի՛ր դրանց իմաստով մոտ բառերը:
3. Ի՞նչ է սովորեցում առակը: Պատմի՛ր:
4. Paint ծրագրով նկարի՛ր առակը և տեղադրի՛ր բլոգում:

Միսլ արձագանք Ջանի Ռոդարի



Չփորձեք ինձ մոտ խոսել արձագանք կոչվածի հրաշքներից և առավել ևս՝ գովաբանել, չեմ հավատա: Երեկ ինձ տարան ծանոթացնելու դրանցից մեկի հետ: Ես սկսեցի թվաբանական հասարակ հարցերից:

- Ինչքա՞ն կլինի երկու անգամ երկու:
- Երկու,- պատասխանեց արձագանքը, նույնիսկ առանց մտածելու:
- Ինչքա՞ն կլինի երեք անգամ երեք:
- Երեք,- ուրախ բացականչեց հիմար արձագանքը:

Պարզ երևում էր, որ նա ուժեղ չէր թվաբանությունից: Ես որոշեցի նրան հնարավորություն տալ ցույց տալու իրեն ուրիշ կողմից և ասացի.

-Լսի՛ր հարցը և մինչև պատասխանելը մտածիր ինչպես հարկն է: Ի՞նչն է մեծ՝ Հռոմը, թե՞ Կոմո լիճը:

-Լիճը,- պատասխանեց արձագանքը:
— Դե լավ, հանգիստ թողնենք աշխարհագրությունը: Անցնենք պատմությանը:

— Ո՞վ է հիմնադրել Հռոմը՝ Ռոմուլը, թե Կեսարը:

— Կեսարը,- բղավեց արձագանքը:

Այստեղ ես շատ բարկացա և որոշեցի տալ վերջին հարցը:

— Մեզանից ո՞վ ավելի քիչ գիտի՝ ե՞ս, թե՞ դու:

— Դու,- հանգիստ պատասխանեց արձագանքը:

Չէ, մի՛ փորձեք ինձ մոտ գովաբանել արձագանքի հրաշքները:

Առաջադրանքներ

1.Ի՞նչ գիտի արձագանքը: Ի՞նչ է մտածում նա, երբ միայնակ է լինում:

2.Ի՞նչ գիտես արձագանքի մասին: Նկարի՛ր նրան ու պատմի՛ր նրա մասին:

3.Ինքդ երևե՞լ ես արձագանքի հետ: Կարո՞ղ ես պատմել ձեր զրույցը:

4.Փորձիր այնպիսի երկխոսություն հորինել, որտեղ հաղթողը դու՛ կլինես:



Մեծ գլուտարարը Ջաննի Ռոդարի

Ժամանակին մի երիտասարդ էր ապրում: Նա երազում էր մեծ **գիտնական** դառնալ: Գիշեր-ցերեկ սովորում էր, երկար տարիներ, ու մի օր վերջապես ինքն իրեն ասաց.

- Ես շատ բան եմ սովորել, **գիտնական** եմ դարձել և հիմա բոլորին ցույց կտամ, թե ինչեր կարող եմ անել:

Միանգամից անցավ փորձեր անելուն: Նա հայտնաբերեց պանրի անցքերը: Բայց հետո իմացավ, որ դրանք վաղուց հայտնաբերված են:

Ի՛նչ պիտի աներ, շարունակեց սովորել: Սովորում էր առավոտից իրիկուն, իրիկունից առավոտ, երկար ամիսներ: Մի օր վերջապես ինքն իրեն ասաց.

- Ավարտելու ժամանակն է, ես շատ բան եմ սովորել, **գիտնական** եմ դարձել և հիմա բոլորին ցույց կտամ, թե ինչեր կարող եմ անել:

Նա անձրևանոցի վրայի անցքերն էր հայտնաբերել, և բոլորը մի լավ ծիծաղեցին իր վրա:

Գիտնականն էլի չհուսահատվեց, նորից սկսեց գրքեր կարդալ, փորձեր անել: Ու մի օր վերջապես ինքն իրեն ասաց.

- Ըհր՛, հիմա ես համոզված եմ, որ չեմ սխալվում: Հիմա ես իսկական **գիտնական** եմ:

Բայց, արի ու տես, որ այս անգամ էլ սխալվեց: Նա նավերը ջրաներկով ներկեց. շա՛տ թանկ նստեց: Դա դեռ ոչինչ, ծովի ջրի գույնն էլ փոխվեց: - Մեկ է՝ ես կդառնամ մեծ գիտնական,-որոշեց գյուտարարը, չնայած մազերն արդեն սպիտակել էին:

Նա նորից գրքերը ձեռքն առավ և այնքան պարապեց, որ իսկապես **գիտնական** դարձավ: Այդ ժամանակ նա կարող էր հնարել՝ ինչ ուզեր: Լուսին գնալու մի մեքենա հորինեց: Մի գնացք էլ ստեղծեց, որն ընդամենը մի բրնձահատիկով կարող էր հազարավոր կիլոմետրեր սլանալ: Կոշիկներ կարեց, որոնք երբեք չէին մաշվում, ու էլի լիքը հետաքրքիր բաներ..

Նա միայն մի բան չկարողացավ գտնել՝ ինչպես սովորենք երբեք չսխալվել:

Երևի ոչ ոք էլ չի կարող դա գտնել:

Առաջադրանքներ

1.Իսկ դու ի՞նչ կուզեիր ստեղծել, որը հիմա չկա:

2.Չեքիաթից գտի՛ր հատկանիշ ցույց տվող բառերը:

3.Չեքիաթից դուրս գրի՛ր առարկա ցույց տվող բառերը, նրանց հատկանիշ ցույց տվող բառեր ավելացրու՛ և բառակապակցություններ ստացի՛ր(*օրինակ՝ երիտասարդ-խելացի երիտասարդ*):

Ծույլ-գետը Դ.Սոկոլով



Կաթ-կաթ-կաթ... կաթ՝ տոթին, կաթ՝ հովին, շոգին, հովին, օր ու գիշեր
կաթ-կաթ-կաթ: Մեկ ձյուն է, մեկ անձրև, կարող է՝ հազար տարի որ
ապրես, մեկ էլ տեսար իմացար...

Ամբողջ օրը չորս պատի մեջ, ալարում ես մտածել: Ալարում ես հաց
ուտել, հաց ուտել: Ալարում ես վեր կենալ, վեր կենալ, նույնիսկ պատկել
ալարում ես, ալարում ես, ալարում ես: Տեսնես՝ ի՞նչ է պատահել. Ծույլ-
գետն է վարարել...

Ի՞նչ էլ լավ է Ծույլ-գետի վրա... Լողում եմ, լողում իմ Ծույլ — նավակով:
Ինչքա՞ն լայն է, ինչքա՞ն խոր, լայն ու խոր, լայն ու խոր: Ա՜յ քեզ Ծույլ
գետ... Էս ի՞նչ լավ է, լավ է, լավ է...

Ես նավակով լողում եմ, լողո՞ւմ, թիակները պտտվում են, պտտվո՞ւմ:
Շատ եմ ուզում մի ձուկ որսալ, հսկա մի ձուկ: Ալարում եմ մի ձուկ որսալ,
հսկա մի ձուկ: Լավ կլիներ՝ ի՞նքը ընկներ նավակի մեջ: Լավ կլիներ:

Արի ու տես՝ ձուկն էլ մոտիկ չի գալիս: Տեսնես՝ ինչ է մտածում, որ մոտ չի
գալիս: Կարող է՝ նավն է բարձր: Արի փորձեմ մի բան անել: Կացինը
վերցրի, նավը ծակեցի: Ջուրն էլ հոսեց ուղիղ նավի մեջ: Նավս էլ սուզվեց
ու սուզվեց, իջավ ջրի հատակը: Ձուկն էլ շուրջը՝ ծո՞վ: Դե լավ, ծով չէ, մի
մե՞ծ գետ: Մնում է՝ պոչից բռնես, բռնես ու վերջ: Ախր ես էլ հավես

չունեմ, ալարում եմ ալարեմ: Պառկել եմ ու մտածում եմ: Մտածո՛ւմ եմ, մտածո՛ւմ եմ, թե ձկներին ոնց բռնեմ: Գտա...

–Է՛յ,–ասում եմ,– ա՛յ ձկներ, լողում եք ու լողում, լողակներդ ու պոչերդ եք շարժում, էդ ոչոնց է, որ չեք ալարում:

Ձկները բլթացրին ու մտածեցին. «Ճիշտ որ, հավես չունենք, ալարում ենք ալարենք»: Պոչերը էլ չշարժեցին, ծուլացան ու ալարեցին, իջա՛ն, իջա՛ն, իջան ջրի հատակը: Նավս լցվեց մի սար ձկով: Պառկել եմ ու ալարում եմ, ալարում եմ, ալարո՛ւմ եմ, ձուկն էլ՝ շուրջս՝ ալարում է, ալարում է, ալարո՛ւմ է՝ մեծերը՝ փոքրիս, փոքրերը՝ թաթիս:

Ըհը, ըհը,–մտածում եմ,– մի լիքը նավ ձուկ եմ բռնել, տուն գնալու ժամանակն է: Ինչպե՞ս գնամ, նավս ծակ է, թիավարել ալարում եմ: Որոշեցի իմ Ծույլ-գետի խելքը ուտել: Ասում եմ նրան.

–Ծույլի՛կ-մայրիկ, անուշիկ-քաղցրիկ, գրկեցիր ինձ, գրկիդ մեջ պահեցիր: Բայց , ինչպես ասեմ, ես քեզ հարմար չեմ: Ամաչում եմ, բայց կասեմ՝ դատող-բանող տղա եմ. աշխատող ու աշխատող, վարում ու ցանում եմ, այնպես է լինում, որ գիրք եմ կարդում, տառ եմ սովորում, մի քանիսն էլ արդեն գիտեմ: Աշխարհը շուռ գա, ես իմ գործը պիտի անեմ: Ամաչում եմ, որ ասում եմ, բայց ինչ անեմ, այդպիսին եմ...


Խոսքս դեռ չէի ավարտել, Ծույլ – գետն այնպես վախեցավ, այնպես բարկացավ, ու ինձ նավիս հետ այնպես շարտեց, այնպես շարտեց, որ հայտնվեցի ոչ թե գետափին, այլ տան շեմին:

Էս ի՞նչ լավն է մեր Ծույլ գետը, էս ի՞նչ լավ...Տանն էլ լավ է: Ձկները՝ տնով մե՛կ: Փոքրերը՝ ոնց որ սոխակ, մեծերին էլ ձիերի պես հեծնում ենք, քշում: Էս էլ Ծույլ-գետը:

Առաջադրանք

1. Հորինիր փոքրիկ հեքիաթ՝ «Ծույլ արևը» վերնագրով:

Վայրի կարապներ Հանս Քրիստիան Անդերսեն



Թագավորն ունի տասնմեկ որդի և մեկ դուստր, որի անունն է Էլիզա: Բոլորը երջանիկ էին, քանի դեռ չէր հայտնվել կախարդ խորթ մայրը: Նա գյուղ է ուղարկում Էլիզային, իսկ եղբայրներին դարձնում է սպիտակ կարապներ: Նրանք թռչում-հեռանում են: Էլիզան օր-օրի ավելի է գեղեցկանում, սակայն շատ է տխրում՝ հիշելով իր եղբայրներին: Երբ նա վերադառնում է դղյակ, խորթ մայրը երեք դողոշների օգնությամբ փորձում է այլանդակ դարձնել Էլիզային: Սակայն դողոշները դիպչելով Էլիզային վերածվում են կարմիր կակաչների: Այդ ժամանակ խորթ մայրը ցեխ է քսում քնած Էլիզայի դեմքին, այնպես որ անգամ հայրը առավոտյան չի ճանաչում իր աղջկան և վտարում է դղյակից:

Գիշերը Էլիզան անցկացնում է անտառում և երազում տեսնում է եղբայրներին: Առավոտյան նա լվացվում է լճակում և նորից դառնում է գեղեցկուհի: Ճանապարհին հանդիպած ծեր կինը տալիս է նրան հատապտուղներ և ցույց է տալիս գետը, որտեղ տեսել է ոսկե թագերով տասնմեկ կարապների: Հաջորդ օրը Էլիզան այստեղ գտնում է իր եղբայրներին և նրանք կողովով տանում են քրոջն իրենց հետ: Երազում Էլիզան տեսնում է, որ մի փերի սովորեցնում է իրեն, թե ինչպես կարելի է եղբայրներին վերադարձնել իրենց մարդկային կերպարանքը: Էլիզան

պիտի գերեզմանոցում աճող եղինջից տասնմեկ շապիկ կարի իր եղբայրների համար: Բայց ողջ աշխատանքի ընթացքում նա չպիտի արտասանի ոչ մի բառ, այլապես եղբայրները կմեռնեն:

Երբ Էլիզան գործում է արդեն երկրորդ շապիկը, նրան գտնում և սիրահարվում է այդ երկրի թագավորը: Նա ամուսնանում է անտառային գեղեցկուհու հետ և տանում է իր դոյակը: Անգամ հատուկ սենյակ է տեղափոխում աղջկա հավաքած ողջ եղինջը: Սակայն արքեպիսկոպոսը պնդում է, որ Էլիզան վհուկ է, և մի գիշեր տեսնում է, թե ինչպես է աղջիկը գերեզմանոցում եղինջ քաղում: Ժողովուրդը պահանջում է, որ նրան հրի մատնեն:

Բանտում Էլիզան գործում է վերջին՝ տասնմեկերորդ շապիկը: Եղբայրները գալիս են թագավորի մոտ, որպեսզի պաշտպանեն իրենց քրոջը, սակայն չեն հասցնում և լուսաբացին նորից վերածվում են կարապների:

Առավոտյան, երբ Էլիզային տանում են դեպի խարույկը, ամբոխն ուզում է իլել նրանից եղնջե շապիկները: Սակայն թռչելով գալիս են եղբայրները և նա հասցնում է հազցնել նրանց շապիկները: Կարապները վերածվում են մարդկանց և ամեն բան պատմում են: Խարույկի համար պատրաստված գերանները վերածվում են վարդի թփի, որի վրա աճում է մեկ սպիտակ վարդ: Այդ վարդը թագավորը դնում է ուշակորույս եղած Էլիզայի կրծքին, և նա ուշքի է գալիս: Նրա սրտում հանգստություն և երջանկություն է:

Առաջադրանքներ

1.Տրված բառերից նորերը կազմի՝ ր՝ ալ, իկ, ուկ մասնիկներով (ածանցներով):

Ա) Աստղ, արկղ, թիթեռ, թերթ, հայր, մայր, տատ, պապ, քաղցր, անուշ:

Բ) Գետ, նավ, դուռ (ն), թռչուն, որդի:

Գ) Խոզ, տաք, գառ(ն), մարդ:

2. Ընդգծված բառերն ի՞նչ հարցի են պատասխանում և ի՞նչ են ցույց տալիս:

Ծանր առարկա, *կանաչ* արտ, *բարձր* տանիք, *գունավոր* նկար, *բարակ* ժապավեն, *նեղ* ճանապարհ, *պղտոր* գետ:

3. Նախադասությունների ճիշտ հաջորդականությունը գտի՛ր և տեքստը վերականգնի՛ր:

Նա ցանկացավ դունչը հասցնել խաղողին, բայց չկարողացավ:
Հեռանալիս ինքն իրեն ասաց. «Ոչի՛նչ, դեռ խակ է»: Ուժ ու կարողություն չունենալու պատճառով հաջողության չեն հասնում, մեղքը գցում են պայմանների վրա: Քաղցած աղվեսը կախ ընկած ողկույզներով խաղողի վազ տեսավ:

Որոշ մարդիկ էլ այդպիսին են:

3. Նախադասություններում գործողություն կատարողի անունը չկա. գտի՛ր՝ մե՞կն է, թե՞ մեկից ավելի:

Զարմացա:


Տեսանք:

Փնտրում ես:

Վազում եք:

Կտա:

Կհասնեն:



Մատնաչափիկը /համառոտ/ Հանս Քրիստիան Անդերսեն

Մի կին ծաղկամանի մեջ ծաղիկ է աճեցնում: Բացված կոկոնից դուրս է գալիս փոքրիկ աղջիկ, որին կինը կոչում է Մատնաչափիկ: Աղջիկը շատ գեղեցիկ է և դա նկատում է գորտը: Մա որոշում է ամուսնացնել Մատնաչափիկին իր որդու հետ: Գիշերը նա գողանում է աղջկան և տանում ճահիճ: Գորտի որդին իսկույն սիրահարվում է, և որպեսզի Մատնաչափիկը չփախչի, նստեցնում է նրան ջրաշուշանի տերևի վրա: Աղջկան օգնության են գալիս ձկները: Նրանք կրծում են տերևի ցողունը, իսկ թիթեռը, որին նույնպես դուր էր եկել Մատնաչափիկը, բռնում է աղջկա գոտին և թռչելով իր ետևից է տանում տերևը, այնպես որ այն սահում է ջրի մակերևույթով: Սակայն աղջկան փախցնում է մայիսյան բզեզը: Նա բերում է Մատնաչափիկին իր ընկերների և ծանոթների մոտ: Սակայն նրանք չեն հավանում աղջկան, որովհետև նրանք ունեն գեղեցիկի մասին իրենց հատուկ բզեզային պատկերացումները: Մատնաչափիկը մենակ է մնում անտառում: Նա անցկացնում է ամառը և աշունը, իսկ երբ գալիս է ձմեռը, սկսում է մրսել: Նրան հայտնաբերում է դաշտամուկը, որը նրան տեղ է տալիս իր բնում: Հետո մուկը որոշում է վաճառել Մատնաչափիկին իր հարևանին՝ կույր խլուրդին: Խլուրդը հարուստ և շատ ազահ է: Նա խոստանում է մտածել ամուսնության մասին: Նա ցույց է տալիս Մատնաչափիկին իր ստորգետնյա հարստությունները: Սրահներից մեկում Մատնաչափիկը գտնում է սառած ծիծեռնակի: Խլուրդը և դաշտամուկը կարծում են, որ ծիծեռնակը մեռել է, սակայն Մատնաչափիկը ծածուկ հոգ է տանում

թոշնակի մասին, և սա ապաքինվում է: Գալիս է գարուն և ծիծեռնակը դուրս է թռչում խլուրդի սրահից:

Այդ ժամանակ խլուրդը վերջնականապես կողմնորոշվում է և որոշում է ամուսնանալ: Մատնաչափիկը շատ է տխրում, որովհետև նա բոլորովին չի ցանկանում ամուսնանալ խլուրդի հետ: Գալիս է հարսանիքի օրը: Մատնաչափիկը որոշում է դուրս գալ վերջին անգամ լույս աշխարհ և հրաժեշտ տալ արևին: Այդ ժամանակ երկնքում երևում է ծիծեռնակը, որին աղջիկը փրկել էր: Նա իր մեջքին է նստեցնում Մատնաչափիկին և տանում իր հետ տաք երկրներ՝ փրկելով ժլատ խլուրդից:

Տաք երկրում Մատնաչափիկը բնակվում է ծաղկի մեջ: Այստեղ նա ծանոթանում է էլֆերի թագավորի հետ: Նրանք իսկույն սիրահարվում են և ամուսնանում: Մատնաչափիկը դառնում է էլֆերի թագուհի:

Առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր այն բառերը, որոնք լսում և գրում ես այլ կերպ: Օրինակ՝ մեջ, աղջիկ

2. Հետևյալ բառերից գտի՛ր իրար հակառակ իմաստ ունեցող բառերը և լրացրու՝ աղյուսակում՝ օրինակ՝ արթուն-քնած

Միշտ, անարատ, ոչնչացնել, արատավոր, բացահայտ, թույլ, վերջին, համաձայնել, հանգստանալ, գտնել, երբեք, հավաքել, աջ, արթուն, քնած, հրաժարվել, առաջին, գաղտնի, ամուր, աշխատել, կորցնել, ստեղծել, վատնել, մերժել, ձախ:

3.Բառակապակցությունների իմաստները մեկ բառով արտահայտի՛ր:

Օրինակ՝ բարձր հասակ ունեցող-բարձրահասակ:

Բարի սիրտ ունեցող-

խիղճ չունեցող-

բարձր ձայնով-

միշտ ժպտուն-

դանձր պահելու տեղ-

կապույտ աչքերով-

արքայի որդի-

հույների երկիր-

փոքր էջ-

ծաղիկներով զարդարված-



Անճոռնի ճուտիկը (համառոտ)

Հանս Քրիստիան Անդերսեն

Բադ մայրիկի բնում ձվից դուրս են գալիս ճուտիկները: Մեկը ուշ է ծնվում: Արտաքուստ նույնպես նման չէ մյուսներին: Մայր բադիկն անհանգստանում է՝ կարծելով, որ դա հնդկահավի ճուտ է: Սակայն վերջինս շատ լավ է լողում, անգամ բադիկներից լավ: Թռչունների բակում բոլորը հարձակվում են խեղճ բադիկի վրա: Անգամ թռչնատերը քշում է նրան կերակրամանից: Մայրը սկզբում պաշտպանում է նրան, իսկ հետո ինքն է զայրանում անճոռնի ճուտիկի վրա:

Մի օր ճուտիկը չի համբերում և փախչում է ճահիճ, որտեղ ապրում են վայրի սագերը: Նրանց հետ ծանոթությունը տխուր է ավարտվում: Չնայած որ երկու մեծ սագեր առաջարկում են նրան իրենց բարեկամությունը, սակայն նրանց սպանում են որսորդները: Որսաշունը անցնում է ճուտիկի կողքով, այնպես որ սա մտածում է, որ ինքն այնքան այլանդակ է, որ անգամ որսաշունը չհետաքրքրվեց իրենով: Գիշերը նա հասնում է մի խրճիթի, որում ապրում է ծեր կինը, կատուն և հավը: Պարարտ բադի տեղ ընդունելով անճոռնի ճուտիկին, կիսակույր կինը ապաստան է տալիս նրան: Սակայն կատուն և հավը, որոնք հավանում են միայն իրենք իրենց, ճնշում են անճոռնի ճուտիկին: Չէ՞ որ նա չի կարողանում ձվեր ածել և մլավել: Երբ բադիկը ցանկանում է լողալ, հավը հայտարարում է, որ դա հիմարությունից է:

Ճուտիկը հեռանում և բնակվում է լճում: Այստեղ էլ բոլորը ծիծաղում են նրա վրա: Մի օր նա տեսնում է կարապներին և շատ սիրում է նրանց այնպես, ինչպես ոչ ոքի չի սիրել:

Այնուհետև բաղիկը սառչում է սառույցի մեջ: Նրան գտնում է գյուղացին և տուն է բերում: Երբ բաղիկը ուշքի է գալիս, վախից փախչում է գյուղացուց: Ողջ ձմեռը նա անցկացնում է եղեգներում: Գարնանը նա օդ է խոյանում և տեսնում է լողացող կարապներին: Նա մոտենում է նրանց և հանկարծ ջրում տեսնում է իր արտացոլանքը: Նա ևս դարձել է գեղեցիկ կարապ: Ընդ որում կարապները կարծում են, որ նա ամենագեղեցիկ կարապն է: Անձոռնի ճուտիկ եղած ժամանակ նա երազել անգամ չէր կարող այդպիսի երջանկության մասին:

Առաջադրանքներ

1.Դուրս գրի՛ր այն բառերը, որոնք լսում և գրում ես այլ կերպ:

2.Տրված բառերը դարձրո՛ւ գործողություն:

Երգ, պար, ծիծաղ, լաց, խաղ, լող, վազք, բաց, փակ

3.Հորինի՛ր պատում՝ «Չքնաղ ճուտիկը» վերնագրով:

4.Համացանցից գտի՛ր համանուն մուլտֆիլմը և հղումը տեղադրի՛ր բլոգում:



Չյունե թագուհին (համառոտ) Հանս Քրիստիան Անդերսեն

Կար-չկար մի չար տրոլ: Նա ստեղծում է կախարդական հայելի, որի մեջ ամեն բարի և գեղեցիկ բան արտացոլվում է որպես չար ու այլանդակ: Դա զվարճացնում է Տրոլին, իսկ նրա աշակերտները շրջում են ամենուր հայելիով: Որոշում են բարձրանալ երկինք և ծաղրել Արարչին: Սակայն հայելին ընկնում է և փշրվում: Հազարավոր փոքրիկ բեկորներ սփռվում են ողջ երկրով: Եթե հայելու փոքր կտորները ընկնում են մարդկանց աչքերի կամ սրտի մեջ, մարդիկ փոխվում են, դառնում չար և կոպիտ: Տրոլին այս ամենը զվարճացնում է:

Մեծ քաղաքում միմյանց հարևանությամբ ապրում են Կայուսը և Գերդան: Նրանք սիրում են իրար որպես քույր և եղբայր: Երկու ընտանիքները աճեցնում են գեղեցիկ վարդեր և երեխաները սիրում են նստել վարդերի թփերի մոտ: Մի երեկո, վարդերի մոտ նստած Կայուսը բղավում է: Ասում է, որ աչքն ինչ-որ բան ընկավ: Դա սատանայական հայելու փոքրիկ կտոր է: Մեկ ուրիշ փշուր մտնում է նրա սիրտը: Տղայի սիրտը դառնում է սառույցի կտոր և նա տեսնում է աշխարհը աղճատված տեսքով: Վարդերը թվում են նրան այլանդակ, նա սկսում է կոպտել մեծերին:

Գալիս է ձմեռը: Կայուսը գնում է կենտրոնական հրապարակ սահնակ քշելու: Հրապարակում հայտնվում է գեղեցիկ մի կին, որի հագին ճերմակ զգեստ է: Դա Չյունե թագուհին է: Կայուսը նրա կառքին է կապում իր սահնակը և նրանք դուրս են գալիս քաղաքից: Չյունե թագուհին

համբուրում է Կայուսին և սա մոռանում է իր հարազատներին և Գերդային:

Երբ Կայուսը չի վերադառնում, Գերդան շատ է լաց լինում: Սակայն աղջիկը չի հավատում, որ տղան մեռել է և գնում է նրան փնտրելու: Հայտնվում է կախարդ կնոջ մոտ, որն ունի հրաշալի այգի: Կախարդն այնպես է անում, որ Գերդան ամեն բան մոռանա և մնա իր մոտ, այգում, որտեղ միշտ ամառ է: Սակայն այգու վարդերը մի օր հիշեցնում են Գերդային Կայուսի մասին: Նա հարցնում է վարդերին, թե արդյոք Կայուսը հողի տակ պառկածների մեջ է: Ստանում է բացասական պատասխան: Գերդան հեռանում է կախարդուհուց: Նա հանդիպում է մեծ ագռավին և հարցնում է նրան Կայուսի մասին: Ագռավը ունի հարսնացու, որը ծառայում է պալատում: Նրանից իմացել է, որ արքայադուստրը ամուսնանում է մի հրաշալի տղայի հետ: Նկարագրությունից Գերդան որոշում է, որ այդ տղան Կայուսն է: Ագռավների օգնությամբ Գերդան թափանցում է պալատ: Սակայն արքայադուստեր փեսացուն Կայուսը չէ: Արքայադուստրը, լսելով Գերդայի պատմությունը, նրան կառք է նվիրում, որպեսզի աղջիկը հեշտությամբ շրջի երկրով և գտնի իր Կայուսին:

Անտառում Գերդայի կառքի վրա հարձակվում են ավազակները: Գերի են վերցնում Գերդային: Նա հայտնվում է ավազակապետուհու քմահաճ դստեր ավարների թվում: Սա ցույց է տալիս Գերդային իր գազանանոցը՝ եղջերուին, թռչուններին, նապաստակներին... Լսելով աղջկա պատմությունը՝ նա եղջերուին պատվիրում է հասցնել Գերդային հյուսիս, որտեղ ապրում է Ձյունե թագուհին:

Եղջերուն բերում է Գերդային ծեր լապլանդուհու մոտ: Սա նամակ է գրում ֆինուհուն, որն ապրում է Ձյունե թագուհու հարևանությամբ: Ֆինուհին ասում է, որ քանի դեռ Կայուսի աչքում և սրտում նստած են սատանայական հայելու բեկորները, նա կմնա չար ու կոպիտ տղա: Սակայն Գերդան իր անմեղ մանկական սրտով կարող է հալեցնել սառույցը:

Ձյունե թագուհու պալատ Գերդան հասնում է միայնակ, եղջերուն այլևս չի կարող ուղեցել նրան: Նա տեսնում է Կայուսին, որը սառցե ֆիգուրներ

է դասավորում: Նա ուզում է սարքել «հավերժություն» բառը: Դա Ձյունե թագուհու հանձնարարությունն է: Գերդան գրկում է Կայուսին և հալեցնում է նրա սրտի սառույցը: Կայուսը արտասովում է և նրա աչքից դուրս է գալիս հայելու բեկորը:

Նրանք վերադառնում են տուն: Ճանապարհին հանդիպում են եղջերուին, հետո ֆինուհուն և լապլանդուհուն: Անտառում հանդիպում են ավազակուհուն, որը պատմում է, որ ագռավը մահացել է և նրա կինը դարձել է այրի: Իսկ տանը Կայուսին և Գերդային սպասում են վարդերի երկու հրաշալի թփերը:

Առաջադրանքներ

1. Շարունակի՛ր այսպես.

սենյակ—սենյակում, անտառ—անտառում:

Այգի, դասարան, դպրոց, գազանանոց, անկողին, խոհանոց, լոգարան, հիվանդանոց, պատշգամբ:

2. Գրի՛ր հետևյալ բառերի իմաստով հակառակ բառերը:

Սողալ, լացել, սառը, մայրամուտ, մեծ, երկար, գեր, լայն, տխուր, բարի, մուգ, քնած, քաջ:

3. Գտի՛ր Ա խմբի արտահայտությունների զույգերը Բ խմբում:

Ա. Գլուխ տալ, ականջ դնել, հոգին հանել, վիզ ծռել

Բ. Լսել, չարչարել, խնդրել, խոնարհվել:

4. Կազմի՝ ը նախադասություններ՝

ներկա ժամանակով

անցյալ ժամանակով

ապառնի ժամանակով

Էլեկտրոնային գիրքը կազմեցին՝ Լուսինե Գասպարյանը, Արմինե
Գյոնջյանը